№ 141 ՇԱԲԱԹ 29 ՅՈՒՆԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 29 ՅՈՒՆԻՍԻ № 141

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաեւ խոստացված ՊՐԷՄԻԱՆԵՐԸ:

Մարտիրոս, Պօղոս, Արտաշէս, Հայկակ, Մամիկոն ՍԻՒՏՃԵԱՆՆԵՐԸ և Աղաւնի Սողոմոնեանը սրտի անհուն կսկիծով յայտնում են իրանց սիրելի մօր՝

ՄԱՐԻԱՄ ՍԻՒՏՃԵԱՆԻ

մահը: Մարմնի յուղարկաւորութիւնը կատարվելու է այսօր, շաբաթ, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից (Ակիմօվսկայա 34, Արմեանսկի բազար) դէպի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին: Թաղումը Կուկիայի գերեզմանատանը:

535. 2—2

Մարգարիտ Սարգսեան ՄՈՒՍԵԱՆԸ սրտի անհուն ցաւով յայտնում է բարեկամներին և ծանօթներին անմոռանալի բարեկամ

ԴԵՐԱՍԱՆ ՀԱՅԿ ՀԱՅԿԱԶԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ երկարատև հիւանդութիւնից յետոյ: Մարմնի յուղարկաւութիւնը վաղը, կիրակի, յունիսի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից դէպի ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

539. 1—1

ՇՈՒՇԻ-ԵՒԼԱԽ ՊՕՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏԸ

Կայարանի գրասենեակը յայտարարում է, որ հեռագիրներով և նամակներով ընդունվում են առաջօրէն պատուէրներ կառքերի համար Եւլախում:

ՓԱԿ ԿԱՌՔԵՐԸ—կարէթ՝ 24 ր., կոլեասկաները՝ 22 և 25 ր., օմնիբուսները՝ (դիլիժանս) 25—30 ր. և աւելի: Առանձին տեղերի համար այդ կառքերում 4 և 5 ր.: ԲԱՑ ԼԱՆԴՕՆԵՐԸ—5 և 6 մարդու համար—արժէն 30—35 ր. և աւելի: Հասցէն՝ Евлахъ, почтовая станція.

Կարգադրիչ՝ ԼԵՒՈՆ ՎԱՐԱԶԵԱՆ

օ. մ. տռ. 468. 10—10

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Տիգրան Յովհաննիսեանը

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԲԱԳՈՒ

Հասցէն՝ Баку, улица Гоголя 26. Присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу.

(7) տռ. 538. 2—1

ԲԺԻՇԿ

ՄԱԿԱՐԵԱՆՑԸ

Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը

ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ

Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ: Հասցէն՝ Верхній бульваръ, д. Зипаловой.

(օ. մ.) տռ. 401. 20—16

ԱՄՕԹԱԼԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Բալկանեան երկրները, որոնք դաշնակցել էին Թիւրքիայի դէմ կռուելու և աջողութեամբ իրագործեցին իրանց ծրագիրը, այսօր ոչ միայն եղբայրասպան կռիւ են սկսել իրար դէմ, այլև նրանցից մի քանիսը ուղղակի դաշնակցութիւն են կնքել իրանց երէկվայ ընդհանուր և ոխերիմ թշնամու՝ Թիւրքիայի հետ, որպէսզի կարողանան ջնջել իրանց դաշնակիցներից մէկն ու մէկին:

Քաղաքականութեան և քաղաքագիտութեան մէջ, առհասարակ, բարոյական սկզբունքները շատ խախուտ և անկայուն են լինում. բայց երբ այդ սկզբունքները խախտվում են, խախտումը պայմանաւորվում է գոնէ բէալ շահերի և օգուտների նկատումներով:

Արդ, ներկայ դէպքում, ինչ բէալ, իրական օգուտներ կարող են ստանալ բալկանեան երկրները իրանց եղբայրասպան պատերազմից:

Ոչինչ:

Ոչինչ ենք ասում, որովհետեւ դժուար թէ մեծ պետութիւնները թոյլ տան, որ բալկանեան այս կամ այն պետութիւնը ստանայ մի նոր խոշոր յաւելումն այն ամենի, որ ունի այժմ. կարող են լինել մանր, չնչին յաւելումներ: Բայց միթէ այդ մանր յաւելումները կարող են փոխարինել այն ահագին շահերը—մարդկային, նիւթական, տնտեսական և բարոյական—որ պէտք է տայ ամեն մի կռւող երկիր: Տասնեակ տարիներ են պէտք՝ մինչև որ կրած սոսկալի վնասները դարմանվեն:

Բայց վտանգը, վնասը միայն այդտեղ չէ: Կայ մի աւելի սոսկալի վտանգ, որ կարող է ի չիք դարձնել այն փառաւոր յաղթութիւնը և նուաճումները, որ կատարեցին երէկվայ դաշնակիցները: Թիւրքիան կարող է օգտվել—և նա արդէն պատրաստվում է—բալկանեան երկիրների գժտութիւններից, նրանց եղբայրասպան պատերազմից և ձեռնարկել, անշուշտ եւրոպական մի բարեկամ պետութեան գաղտնի օգնութեամբ, յետ խլելու, նուաճելու իր կորցրած երկիրները:

Եւ եթէ այդ աղէտը պատահի—ինչ որ անհաւանական չէ—որպիսի ամօթով և խայտառակութեամբ պէտք է ծածկվեն բալկանեան երկիրների ղեկավարները, քանի հազարաւոր ժողովուրդների անէծքին և բանադրանքին պէտք է ենթարկվեն նրանք, որովհետև այդ նոր ազատագրված ժողովուրդները պէտք է նորից ընկնեն թիւրքական անարգ լծի ներքոյ:

Բայց ո՞վ եղաւ իսկապէս պատճառ այս եղբայրասպան պատերազմի և իրերի այս նոր, ցաւալի դրութեան ստեղծվելուն:

Որչափ փաստերը թոյլ են տալիս եզրակացնել, Բուլգարիայի փառասիրութիւնը և անյագ ախորժակն է գլխաւոր պատճառը, թէև միւս երկիրներն ևս նուազ յանցաւոր չեն, քանի որ մասնակցում են այդպիսի մի եղբայրասպան պատերազմի: Բայց Բուլգարիան, կարծէք, ստանում է իր պատիժը, որովհետեւ վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ նա ամենուրեք պարտութիւն է կրում, գերիներ է տալիս: Անշուշտ, եթէ Սերբիան, Ռումինիան, Յունաստանը, Չեռնոգորիան միանան, եթէ մանաւանդ Թիւրքիան ևս դաշնակցէ դրանց, ոչ միայն Բուլգարիայի երազները «մեծ Բուլգարիա» և «Բիւզանդական կայսրութիւն» ստեղծելու՝ կը չքանան, այլ և փոքրիկ Բուլգարիան կը ջախջախվի:

Որքան կարելի է նկատել, դժուար թէ պատերազմողները խելքի գան: Մնում է միայն, որ եւրոպական մեծ պետութիւնները, գլխաւորապէս Ռուսաստանը, աշխատեն օր առաջ դադարեցնել այդ եղբայրասպան պատերազմը և առաջն առնել քրիստոնէական աշխարհի համար աղէտներ պարունակող հետեւանքների:

Տարակոյս չը կայ, որ այս նոր պատերազմը մեծ վնաս է հասցնում և հայկական հարցի լուծման, որովհետև յետաձգում է անորոշ ժամանակով այդ լուծումը, որ արդէն իր ձեռքն էր առել եւրոպական դիպլոմատիան:

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄԵՐ ՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

([illegible])

—օ—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՄՏԱՑՆՈՒԹԻՒՆ

II

Կ. Պօլիս, 13/26 յունիս

«Թէրջիմանը Հակիկաթի» մէջ Ահմէդ Աղայեվի ստորագրութեամբ լոյս տեսած ապուշ տողերը*), որոնք հայերուս համբերատարութիւն կը քարոզէին և որոնք ոչ մէկ բանադատութեան և լուրջ դատաստանի կը դիմանան, գոնէ պէտք չէր որ հրատարակուէին այս օրերուս, երբ, արդարութեան անունով, մէկ հոգի մը—թող ըլլայ ան Մահմուդ Շէվքէթ-փաշա մը—սպաննած ըլլալնուն համար մահուան դատապարտեցին 25 անձ, որոնցմէ ձեռք անցուած 12-ը կախեցին, առանց նկատի առնելու ոչ անոնց աստիճանը, ոչ դիրքը և ոչ ալ քաղաքական հանգամանքը, որ պատճառ մը աւելի էր, կախաղան չգործածելու համար անոնց դէմ:

Մենք հիմա մեզի համբերատարութիւն յանձնարարող Ահմէդ Աղայեվի կը հարցնենք, թէ արդեօք ոճրագործները պատժելն ալ դրամի կարօտ բարենորոգում մըն էր:

Հայաստանի ամէն մէկ խորշին մէջ, ամեն օր. ամեն ժամ գրեթէ կանոնաւորապէս մարդիկ կը սպաննուին, ծրագրուած յատակագիծի մը վրայ, կանխամտածութեամբ: Կառավարութիւնը, որ ոստիկանութիւն ունի, զինուորական ոյժ ունի և դատարան ու արդարութեան պաշտօնատարներ, ոչ թէ միայն չի պատժեր զանոնք մահուամբ, այլ նոյնիսկ չի բարեհաճիր զանոնք ձերբակալելու:

Արդարութեան այսքան տարրական ու պարզ ըմբռնումէն զուրկ կառավարութեան մը համար ըսել թէ բարենորոգում պիտի գործադրէ, այլ սակայն դրամ չունի, հայերը դդումի տեղ դնել պիտի նշանակէր, և բարեբաղդաբար... և կամ դժբաղդաբար Ահմէդ Աղայեվի տեսակէտէն... հայերն այնքան ապուշ չեն:

Կառավարութեան արդարութեան և անկողմնակալութեան միակ մէկ փաստ կը պահանջենք մենք:

Աղայեվ ցոյց կրնա՞յ տալ արդեօք մեզի միակ նմոյշ մը խումբի մը, որ մասամբ քաւած ըլլայ հայ մը սպաննած ըլլալուն իր ոճիրը:

Ադանայի եղեռնէն յետոյ, բացառաբար Հիւսէյին Հիլմի-փաշա, Եւրոպայի հանրային գրգռուած կարծիքը հանդարտեցնելու և միանգամայն սահմանադրական շրջանի մէջ եւրոպական ըմբռնումով երկիր վարելու նմոյշ մը տուած ըլլալու համար, հազարաւոր ոճրագործներէ մի քանին կախաղան բարձրացնելու աններելի սխալը գործեց: Կը հաւատանք թէ այսքան ամենատարրական արդարութեան մը ինչու չհանդուրժեցին թիւրք վերին դասակարգերը և պաշտօնանկ ըրին Հիւսէյին Հիլմի-փաշան, քրիստոնեայի համար իսլամ կախած ըլլալուն համար:

Եւ դեռ կուզէ որ հաւատանք, թէ թիւրք կառավարութիւնը կրնայ բարենորոգում գործադրել:

Ասիկա մեզի համոզելու համար մէկ Ահմէդ Աղայեվ շատ քիչ է: Բարենորոգումներու գործադրութեան արգելքը ոչ դրամն է և ոչ ալ Թիւրքիոյ հանդարտութեան երես չտեսած ըլլալն է, այլ թիւրք ազգին մէջ Ահմէդ Աղայեվի ոգին կրող անհատներու բազմութիւնն է: Բարենորոգում գործադրելու համար Թիւրքիա վերջին տարուան ընթացքին անսահման դրամ ունեցաւ իր տրամադրութեան տակ և երկար ատեն ալ պատերազմ չունեցած շրջաններ եղան: Ի՞նչ ըրին այդ օրերուն թիւրքերը, եթէ ոչ միայն զբաղիլ իրենց փիլաւով... որ ասկէ վերջն ալ պէտք է իրենց միակ մտատանջութիւնը ըլլայ, կառավարելու հոգը ուրիշներու թողլով... վասն զի 600 տարի փորձուեցան և անընդունակ գտնուեցան:

Հայորդի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—օ—

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ*)

(Նիստը շարունակվում է Լվօվի նախագահութեամբ)

—

Ստենօգրաֆիական հաշիւ յունիսի 6-ի նիստի

Չխենկելիի ճառը

(Կարսի և Բաթումի նահանգների և Սուխումի շրջանի պատգամաւոր)

Խօսելով Ռուսաստանի ընդհանուր քաղաքականութեան մասին, հայկական հարցի առիթով ասում է հետեւեալը.

«Ես կամենում եմ, պարոնայք, Դումայի անդամ Միլիւկովի մէկ դիպլոմատիական քայլն ևս ցոյց տալ: Այսօր նա երկար խօսեց այն հարցի մասին, որի առիթով ես ցանկանում էի արտայայտվել: Ինձ թւում է, որ նա մի փոքր մթագնեց այն: Կրկին ես վերադառնում եմ անցած տարի, դեկտեմբեր ամսում, թիւրքահայերի հարցի առիթով արտասանած նրա ճառին: Այստեղ նա ինչ էր ասում. «Մենք երբեմն թիւրքահայերին գործադրում էինք թիւրքերի դէմ, երբեմն, երբ որ մեզ հարկաւոր էր լինում, զոհ էինք բերում թիւրքերին: Այդ մշտապէս երերուն քաղաքականութիւնը հասցրեց մինչև այնտեղ, որ հայերը տուժեցին երկուստեք և տուժեցին դառնապէս: 1895 թ. մենք զոհ տուինք հայերին արիւնոտ սուլթանին»: Պարոնայք, հայերի դրութիւնը Վանի սանջակում և հարևան վայրերում, որ ամբողջովին կամ մեծամասնութեամբ հայերով են բնակված, մեզ համար անտարբեր չէ կարող լինել: Այդ վայրերը կարևոր են մեզ համար տնտեսապէս, ինչպէս սպառման շուկայ, որում հայերը հանդիսանում են գլխաւոր միջնորդներ, որոնց օգնութեամբ մեր առեւտուրը առաջադիմութիւն է ցոյց տալիս. միայն վերջերս հիմնված շոգենաւութիւնը Ուրմիի լճի վրա հայկական գործ է. միւս կողմից այդ վայրը կարեւոր է մեզ համար նաև ռազմական նպատակներով, որոնց վրա ես երկար կանգ չեմ առնի, բայց և որոնք ձեզ բոլորիդ հասկանալի են: Այդ հատուածից, որը ես հէնց նոր կարդացի, երևում է, նախ և առաջ, այն, որ Դումայի անդամ Միլիւկովը լիովին ընդունում է սառն հաշիւը, կարելի է ասել՝ մեր դիպլոմատիայի մաքիավելիզմը թիւրքահայաստանի գործում: Երկրորդ, նա չի թաքցնում նոյնպէս իր իմպերիալիստական բուռն տենչերը Վանի սանջակի վերաբերմամբ, թէև նա քաշվում է աւելի կոնկրետ ցուցմունքներից, և դարձեալ «հասկանալի պատճառներով»: Նա չէ որ դիպլոմատ է (ծիծաղ կենտրոնում). Նա ջերմ կերպով դիմում է ռուսական դիպլոմատիային, նրա խօսքերով, Թիւրքիայում 1895 թ. հայկական ջարդի այդ յանցաւորին, և պահանջում նրանից, որ նա միջամտէ յօգուտ հայերի: Ահա թէ որքան անսահման է Դումայի անդամ Միլիւկովի վստահութիւնը դէպի մեր դիպլոմատիան, իսկ այստեղից, պարզ է, և դէպի մեր կառավարութիւնը: Բայց նրա մէջ, կրկնում եմ ես, դարձեալ խօսում է իսկական դիպլոմատը, որը ջանում է մարդասիրութեան և հումանիզմի մասին գեղեցիկ խօսքերի տակ ծածկել իր գաղտնի դիտաւորութիւնը. և յատկապէս Վանի սանջակի գրաւման համար, որը, հէնց նրա խօսքերով, այնքան շահաւէտ է Ռուսաստանի համար ոչ միայն տնտեսապէս, այլև ռազմական տեսակէտից: Սրա հետ միասին ես իմ պարտքն եմ համարում ասել, որ հայ ժողովրդի ձգտման մէջ—կռւով ձեռք բերել աւելի քաղաքական պայմաններ իր ազգային առաջադիմութեան համար—նրանն է պատկանում մեր լիակատար համակրանքը: Բայց այդ չը պէտք է խանգարէ մեզ ասել, լիակատար որոշականութեամբ, որ չի կարող լուծվել դիպլոմատիական ճանապարհով: Միայն այն փաստը, որ հայերի գտնվելը Ռուսաստանի սահմաններում՝ 1905 թւի սարսափելի հայ-թիւրքական կոտորածի առաջը չառաւ, խօսում է յօգուտ այն բանի, որ այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող խնդիր, ինչպէս ազգայինն է, չի կարող լուծվել միայն հպատակութիւնը փոխելով: Չէ՞ որ ինչպէս 1895 թւի ջարդը Թիւրքահայաստանում, այնպէս էլ 1905 թ. կոտորածը Անդրկովկասում ունէր իր պատճառը. մի կողմից՝ յանցաւոր գրգռումը և թոյլատրելը իշխանութիւնների կողմից, իսկ միւս կողմից մասսաների տգիտութիւնը: Նշանակում է, վերացնելու համար այդ պատճառները, պէտք է սիստեմատիկ կռիւ սկսել ինչպէս որ իշխանութիւնների դէմ, այդպէս էլ հայ և մուսուլման մասսաների տգիտութեան դէմ: Իսկապէս, կը լինեն արդեօք հայերը ռուսահպատակնե՞ր թէ՞ թիւրքահպատակներ, նրանք պէտք է ապրեն կողք-կողքի քիւրդերի և այլ մուսուլմանների հետ, որոնց մասին այնպէս անարգանքով խօսեց Դումայի անդամ Միլիւկովը: Նա խօսեց մուհաջիրների մասին. ես նրանց լաւ գիտեմ. դրանք երբեմնի ռուսահպատակներն են. և հէնց ո՞վ նրանց այստեղից, Ռուսաստանից դուրս քշեց: Արտաքսեց նրանց այն դիպլոմատիան, որին խնդիրքով դիմեց Պետական Դումայի անդամ Միլիւկովը: (Ձախից ծիծաղ ու ձայներ՝ «բրավօ». աջից մի ձայն՝ «կանչել Միլիւկովին»): Այնպէս որ միատեղ ապրելը, ես ասում եմ... (աջից ծիծաղ և ձայներ՝ «միատեղ ում հետ»)... Հայերի և մուսուլմանների միևնոյն տերրիտօրիայի վրա, որտեղ ապրում են նրանք, նախապէս որոշված է բնութեան կողմից. Նրանց այդ բանից չի ազատի ոչ մի դիպլոմատիա և նոյնիսկ Դումայի անդամ Միլիւկովի դիպլոմատիան: (Ձայներ աջից՝ «ապա ինչը կազատէ»): Հետեւապէս, թւում է, պարոնայք, մի բան. այդ քաղաքական ինքնագիտակցութեան բարձրացումն է, ինչպէս որ հայկական, այնպէս էլ մուսուլմանական մասսաների, ամրացումը եղբայրական կապերի նրանց միջև: Ես պնդում եմ, որ ազգային հալածանքից ազատագրումը հնարաւոր է միայն հայերի և մուսուլմանների իրար միջև փոխադարձ մերձեցման մակարդակի վրա, այլ ոչ թէ նրանց մէկը միւսից անջատվելը: Ուստի ելքը պէտք է փնտռել ոչ թէ դուրսը, այլ այն տերրիտօրիայի ներսը, որի վրա նրանք դարերով ապրել են և ապրում են։ Ես առանձին կարիք եմ զգում ընդգծել այդ ոչ միայն որպէս սօցիալ-դեմօկրատ, այլ և որպէս կովկասցի ու վրացի։ Հենց վրաց ժողովուրդը քանի անգամ թունաւորվեց ռուս իշխանութեան ագենտների ձեռքով հայերի դէմ Թիֆլիսում, հրէաների դէմ Քութայիսում և մուսուլմանների դէմ Բաթումում, բայց նրանց չաջողվեց պօգրօմներ առաջ բերել, ինչպէս որ չի աջողվի ապագայում էլ»։ (Ծափ. ձախից)։

---

*) Այդ յօդուածի թարգմանութիւնն արտատպված է «Մշակի» երէկվայ (№ 140) համարում: Խմբ.

*) Տես «Մշակ» № 140.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ԿՌԻՒՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 յունիսի

Աթէնք.—Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, բօլգարները հեռացել են Կավալայից, լուրերի համաձայն նոյնպէս Դեդէ-աղաչից։

Զինուորական մինիստրութիւնը հրատարակել է հետևեալ հաղորդագրութիւնները. 1) «Երէկ յոյները եռանդուն յարձակում գործեցին Ստրումիցայի ճանապարհի լեռնաշղթայի վրա։ Թշնամին օգնութիւն ստացաւ, գուցէ Իշտիբից, և վճռական դիմադրութիւն ցոյց տուեց, բայց ցիրուցան արվեց։ Մենք արդէն տիրել ենք մի քանի լեռնաշղթայի։ Կռիւը դադարեց խաւարը ընկնելու պատճառով և վերսկըսվեց այսօր։ Թշնամին մեծ խմբերով շարժվում է Ստրումիցայի հովիտով դէպի Պետրիչ։ Այդ՝ ըստ երևոյթին նահանջողների առաջին շարքերն են»։ 2) «Մեր զօրքերը արիաբար առաջանում են և հալածում են թշնամուն։ Մեր զօրամասերից մինը վերին աստիճանի եռանդուն յարձակում գործեց թշնամու թնդանօթաձիգ վաշտերի վրա։ Բօլգարները գերվեցին. նրանցից խլվեցին 5 թնդանօթ ու գնդակացիր»։ 3) «Յոյները, շարժվելով Ստրումիցայի գծով, գիշերով մօտեցան թշնամու դիրքերին 200 մետր տարածութեամբ։ Արևածագին յարձակում կատարվեց, որ ստիպեց հակառակորդին մաքրել դիրքերը խոշոր կորուստներով։ Հալածելով փախչող բօլգարներին, յոյները գրաւեցին ռազմամթերքներ։ Զօրքերի առաջխաղացումը շարունակվում է»։

Այսօր Պիրէյ բերվեցին 1200 նոր բօլգար գերիներ, որոնց թւում գտնվում են մի քանի օֆիցեր։

Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, «Յոյները գրաւեցին Կավալան և Ստրումիցայի ամբողջ հովիտը»։

—

Սալոնիկ.—Յունիսի 26-ին Կոնստանդին թագաւորը ընդունեց Դօյրանի յոյն և թիւրք ազգաբնակութեան։ Մահմեդականները թագաւորին մատուցին սովորական ընծաներ։ Մուֆթին ուրախութիւն արտայայտեց թիւրքերի կողմից բօլգարական տիրապետութիւնից թիւրքերին ազատելու առիթով, յայտնելով որ թիւրքերը կամենում են հաւատարիմ հպատակներ։ Վերջում մուֆթին միջնորդեց, որպէսզի կառավարութիւնը խնամէ այն 600 այրիներին և որբերին, որոնց ամուսինները և հայրերը սպանվեցին 1912 թ. նոյեմբերին։ Բացի դրանից թագաւորը համաձայնեց վերադարձնել մահմեդականներին միակ չաւերված մզկիթը։

—

Բելգրադ.—«Պրես. Բիւրօն» հաղորդում է. «Բօլգարները նահանջում են, հալածվելով մեր զօրքերից, որոնք պատճառելով նրանց մահացու հարուած՝ հանգիստ չեն տալիս։ Պաշտօնական հաղորդագրութիւնների համաձայն, բօլգարները, նահանջելով Իշտիբից, կամեցան դիմադրութիւն ցոյց տալ Րադօվիշտի մօտ, սակայն մեր զօրքերի մօտենալու ժամանակ հեռացան քաղաքից, որը այժմ մեր ձեռքումն է։ Տեղական ազգաբնակութիւնը բուռն կերպով ողջունեց մեր զօրքերի մուտքը։ Բօլգարները թէև վերցրին հետները փախչելիս բոլոր անհրաժեշտ իրերը, բայց և այնպէս ճանապարհին թողեցին հրացաններ, ռազմամթերք, բօլգարների բոլոր յարձակումները սերբ - բօլգարական սահմանագլխում Զայչարի և Պիրոտի միջև վերջնականապէս յետ են մղված։ Սերբ զօրքերը յետ նեղեցին բօլգարներին Վլասինայի մօտերը և գերեցին 80 հեծեալ զինուոր։ Ներկայումս սերբիական երկրի վրա ոչ մի բօլգար զինուոր չը կայ»։

«Պրես-Բիւրօն» հաղորդում է. «Յունիսի 27-ին կէսօրից յետոյ սերբիական հեծելազորը, հալածելով պարտված բօլգարական չորրորդ զօրամասին, գրաւեց Րադօվիշտը։ Բօլգարները փութանակի նահանջում են անկարգ, առանց դիմադրութիւն ցոյց տալու։ Փախչելիս բօլգարները ժամանակ չունէին իրանց սպանվածներին թաղելու համար, որի պատճառով բազմաթիւ դիակներ գտնված են Իշտիբի մօտ բօլգարական նախկին դիրքերում։

Բերում են տասնեակ հազարաւոր վիրաւորների. Սանիտարական դրութիւնը յուսահատական է։ Բժիշկների մեծ պակասութիւն է զգացվում։ Գալիս են բժիշկներ Շվէյցարիայից, սպասվում են Աւստրիայից և Գերմանիայից։ Մեծ յոյսեր են դրվում ռուսական օգնութեան վրա։

—

Սկոպլէ.—Սկոպլէի և Վելէսի բօլգար միտրոպօլիտներին սերբերը թոյլատրեցին մեկնել Բօլգարիա։

Սօֆիա.—Ազգային ժողովը նախագահ ընտրեց նախկին մինիստր-նախագահ Գեշովին, նախագահի օգնական՝ առևտրի նախկին մինիստր Տօդօրովին։ Շնորհակալութիւն յայտնելով ընտրութեան համար, Տօդօրովը ողջոյն ուղարկեց նրանց, որոնք արիաբար մարտնչում են Բօլգարիայի իրաւունքների համար (բուռն ծափահարութիւն)։

Ապա ժողովը ընդունեց զինուորական ծախքերի համար յատկացված նոր լրացուցիչ 50 միլիօն։ Սօցիալիստ Սակիզօվը ցանկացաւ, որպէսզի կառավարութիւնը բացատրութիւններ տայ երկրի դրութեան մասին։ Ֆինանսների մինիստր Տօդօրովը յայտնեց, որ կառավարութիւնը ամեն միջոց ձեռք առաւ խաղաղութիւնը պահպանելու, բայց իրան տեսաւ կանգնած երես առ երես այնպիսի դէպքերի դիմաց, որ ինքը չը յարուցեց. կառավարութիւնը իր յոյսը դնում է ազգային ժողովի աջակցութեան վրա։ Յետոյ խօսեց Դանեւը և նոյնպէս խնդրեց պաշտպանել կառավարութեանը վճռական րոպէին, որ պահանջում է խօսքերի փոխարէն իրական գործ։

Պաշտօնական «Միր» լրագիրը հրատարակել է սերբիական զօրքի անունով արված հրամանի բնագիրը, ստորագրված Պետր թագաւորից և գեներալ Պուտնիկից։

—

Վիէննա.—Տիսան դիմեց ունգարական Կարմիր Խաչին խնդրելով սանիտարական խմբեր ուղարկել Սերբիա և Բօլգարիա, ի նկատի ունենալով բազմաթիւ վիրաւորներին։ Խմբերը մեկնում են երկու օր յետոյ։

Նրանից յետոյ, երբ Վիէննայի և Բուդապեշտի լրագիրները մի քանի օր ուռցրին բօլգարական տեղեկութիւնները և տօնեցին բօլգարական յաղթութիւնները, այժմ նրանց պատել է անհանգստութեան զգացմունք Սերբիայի և Յունաստանի անընդհատ յաղթութիւնների պատճառով։

—

Կ. Պօլիս.—Լրագրական տեղեկութիւնների համաձայն, Բօլգարիան Բ. Դրան յայտնել է, թէ համաձայն է մաքրել Էնոսի և Միդիայի միջև ընկած տարածութիւնը։ Պաշտօնապէս այդ տեղեկութիւնը դեռ ճշտված չէ։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ ԿՈՒՐՍԵՐԸ ԵՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

(Սեփական հեռագիր)

Ալէքսանդրօպօլ, 27 յունիսի

Ժամանեց այստեղ սենատոր Վատացին։

Համագումարին եկողների թիւը մեծ է։ Եկել են շատ կալուածատէրեր բոլոր շրջակայքից։

Ցերեկվայ ժամը 1-ին տեղի ունեցաւ ցուցահանդէսի բացումը։ Կատարվեց հանդիսաւոր մաղթանք, որից յետոյ սենատոր Վատացին յայտարարեց ցուցահանդէսը բացված և արտասանեց մի զգացված ճառ։ Ապա ողջոյնի ճառեր արտասանեցին Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխ Կ. Կամսարական և ցուցահանդէսի կոմիսար Ալ. Քալանթար։

Երեկոյեան կայացաւ նիստ գիւղատնտեսութեան հարցերի վերաբերեալ։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Սովի սարսափ Տարօնի մէջ

Մուշ, 15 յունիս

Ալան-Թալանի և ամենօրեայ կոտորածի սարսափէն աւելի՝ այժմ տիրող սոսկումը գալիք սովն է։

Այս տարուան տարօրինակ ձմեռը բաւական երկարեցաւ և այդ պատճառով դարմանի գինը մէկին հինգ վրայ դրաւ, արմտիքն ալ մէկին մէկ բարձրացաւ. ցորենին քիլէն, որ կարժէր 30—35, մէկէն բարձրացաւ 80-ի։ Սակայն շնորհիւ գարնան յանկարծակի գալստեան, իսկոյն սովի մռայլ ամպերը ցրուեցան և երկրագործին սիրտը քիչ մը զուարթացաւ և քիչ ատենուան մէջ ամեն բան ինկաւ իր նորմալ դրութեան մէջ։

Այժմ սակայն դրութիւնը աւելի քան ըսպառնալից է, և գալիք սովը անխուսափելի կը թուի, որովհետև ներկայիս ժողովրդեան աղէտները թէ բնութենէն են և թէ մարդոցմէ։ Գարնան տեղատարափ անձրևներուն պատճառաւ ցանքը շատ ուշ մնաց, մինչև մայիս 10—15-ը, որ առնեն ցանուածները բուսցնելու համար արդէն հրաշք կամ առատ ջուր է հարկաւոր։

Ամիսէ մը աւելի կայ, որ երկինքը կապուտ է և ոչ ամպի երես չենք տեսներ. գիւղացի երկրագործը դէպի երկինք կը նայի անձրև հայցելու, բայց անձրևի կաթիլ անգամ չկայ։ Յոյսը կը մնար միայն այս անգամ արհեստական ոռոգման վրայ, սակայն շնորհիւ մեր «բարեխնամ կառավարութեան» և քիւրդական բարբարոսութեան, գիւղացիք չեն կարող հեռաւոր վայրերէ ջուր բերել և իրենց ցանած արտերը ջրել։ Հետևաբար շատ արտեր կը չորնան և այլևս քաղելու չի գար.... Ի՞նչ ընել. ուր դիմել խեղճ գիւղացիք. երկինքէն անձրև կը հայցեն, բայց բնութիւնն անողոք է մարդոց դէմ... Իսկ մարդիկ՝ գազանացած միայն բզկտել գիտեն։ Ի՞նչ կառավարութիւն է սա, որ իր գանձի օգուտն անգամ չի կրնար խորհիլ։ Անցեալ տարի Աւրան գիւղի տասանորդական տուրքն էր (8-ին 1-ը գանձելով) 500 լիրա։ Այս տարի գիւղացիք կը հաւատեն, թէ 300 լիրայի հազիւ ծախուի։

Երաշտի և քիւրդական գազանութիւններու ընդհանուր աղէտին կը միանան անասուններու պաճարախտը (դաբաղ) և մարախի սոսկալի վերերևումը Ջիարէթի և շըրջակայ գիւղերու կողմերը։

Այդ ամենը մեզ իրական սոսկում կը պատճառէ և կատարեալ մտավախ մը յառաջիկայ ամիսներու սովին և մթերքներու գիներու բարձրացման։ Արդէն ցորենն սկսեր է գէշ նշաններ ցոյց տալ, և եթէ, Աստուած մի արասցէ, 10—15 օր ալ այսպէս երաշտ անցնի, ցորենին գինը 80-էն կը բարձրանայ 100—120 ղրուշի։ Թախիծ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՐԻԶՈՆԷՆ

—

Ազգ. դպրոցական վիճակ

Վան, 12 յունիս

Սանդխտեան օրիորդաց վարժարանը, որ հիմնուած է 1881 թուին Սանասարեանի կտակով, Վասպուրականի մէջ աղջկանց ամենահին դպրոցն եղած է և քիչ թէ շատ աչքի զարնող դեր կատարած է։ Իր գլխաւոր եկամուտի աղբիւրներն են վերոյիշեալ Սանասարեանի և Գ. Սերեբրենիկովի կտակները, որոնք տարեկան 100 լիրայի բիւջէ մը կը գոյացնեն, և վարժարանին մնացեալ ծախքերն ալ աշակերտուհիներու թոշակներով կը հոգացուին։

Այս հաստատութիւնը, որ երկար տարիներ կրցած է իր գոյութիւնը պահել, սակայն հեռու է իրականանալի մխիթարական կողմերէ՝ ընդլայնելու վարժարանին ծրագիրը։

Սանդխտեանը միշտ ալ տասն տարուան ընթացք ունեցած է. ու զարմանալին այն է, որ ուսուցիչները դեռ հազիւ կարող են դասաւանդել աշակերտներուն, որոնք այդպիսի պայմաններու տակ անհամապատասխան են ուսուցչական ասպարէզ թևակոխել իրենց աւելի քան համեստ պաշարով։ Սակայն, հակառակ այդ ամենուն, Սանդխտեանը կը համարուի մեր միջավայրին մէջ որպէս բարձրագոյն նախակրթարան։

Սանդխտեանէն զատ կայ նաև Գօնտաքճեան քոյրերու մասնաւոր նախաձեռնութեամբ հիմնուած դպրոցը մասնաւոր տան մը մէջ։ Այս հաստատութիւնը գրեթէ չորս տարի է որ գոյութիւն ունի և յաջողած է երկու տարի շրջանաւարտներ տալ։ Դպրոցի տնօրէնն է տ. Եղ. Գօնտաքճեան և իր քոյր Մարինէն։ Ասոնք առաջին անգամ պաշտօնավարած են Սանդխտեան դպրոցի մէջ, յետոյ քանի մը տարի Պարսկաստան անցան և 1909-ին երկիր վերադառնալով ուզեցին հաստատել աղջկանց նոր դպրոց մը, քանի որ պէտքը կը զգացուէր և դեռ կը զգացուի աղջկանց դպրոցներու։ Գօնտաքճեաններու այս ձեռնարկը շատ անհրաժեշտ էր, որովհետև մանչերու 11 դպրոցի դէմ աղջկանց հազիւ 6 դպրոցներ կային։ Սակայն Գօնտաքճեան դպրոցը շատ աւելի լաւ կը լինէր, եթէ չունենար բիւջէի ողորմելիութիւնը, որմէ կախում ունի դպրոցի աւելի լայն կրթութիւնը իր աւելի ձեռնհաս ուսուցիչներով։

Կան և բողոքականաց ու դոմինիկեաններու և այլն օրիորդաց դպրոցներ։

Ա. Բէնտուս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՆՁԱԿԻ ԴԷՊՔԸ

—

Գանձակ, 25 յունիսի

Ահա մի տարի է, ինչ խլրտումներ են սկսվում քաղաքիս ս. Լուսաւորիչ եկեղեցու դպրոցի ուսուցչական կազմի մէջ։ Մի փոքրիկ ուսուցչական խումբ, բաժանված երկուսի, իրար դէմ պայքարելիս է եղել. թէ ինչու, դա այս րոպէիս այնքան էլ կարևոր նշանակութիւն չունի. կարևոր չեն և այդ խլրտման շարժառիթները, մանա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Այն Գերմանիան, Բիսմարկեան Գերմանիան, որի համար Պոմէրանեան մէկ հատ զինուորի ոսկորներն աւելի թանգ արժէին քան երկրով տառապանքն ու տանջանքը և կորուստը մի հինաւուրց վաստակաւոր ազգի, մի ազգի, որ Եւրոպայի պաշտած կուլտուրայի ջահընկալն ու ջահակիրն է եղել ու մնացել Արևելքում հնագոյն ժամանակներից մինչև օրս, այդ Գերմանիան այսօր իր մամուլը անպակաս սնուցանում է հայկական խնդրով։ Այլ բան է շահը. այսօր նա է Գերմանիայի խօսեցնողը։ Եւ այսօր սա ոչ թէ մի Պոմէրանեան զինուորի, այլ ի պահանջել հարկին, և եթէ մանաւանդ հնարաւոր լինէր, գերմանական զօրագնդերի ոսկորներ մեր հողի տակ թաղելու պատրաստ է երևում, այնու միայն որ Փոքր Ասիայի հողի վրա իր երկաթուղագծերը, որոնք կան և որոնք ի նկատի կան, չը խախտվեն։ Այժմ վերջապէս մեզ ներված է յուսալ, որ արևմտեան մեծ ազգերը իրանց շահն ունեն մեզ պահպանելու մօտալուտ կորստեան վըտանգից։ Մնում է մեզ առ ժամս տոկալ ինքնապահպանութեան ջանքերով մինչև յուսացած և յուսադրած պահպանութեան հովանին գայ մեր գլխին տարածվելու։

Եւրոպական մամուլն այդ երկաթն է ծեծում, և մենք էլ նրա կռանի ձայներով կարծես ոգի ենք առնում ու շարժվում։

Այդ ձայները շատ են, և մեր մամուլը բաւարար ոյժ չունի նրանց ամբողջը ժամանակին և թարմ-թարմ իր էջերի վրա հանելու։ Շատերից խիստ սակաւն է միայն երևում։ Օտար թերթեր կուտակված են առաջդ, բայց ուր են ոյժերդ ու միջոցներդ, որ կարենաս բոլորը և ժամանակին դնել ընթերցողիդ առաջ։

Պարտք էր մեր կրեսոսներին, քաղաքացիական պարտաճանաչութեամբ, այս այրող ժամանակում, մի քանի ոյժ աւելացնել մեր մամուլի շուրջը՝ այդ պահանջին կարելի եղած մեծ չափով բաւարարութիւն տալու։ Բայց նրանք կամ չեն մտածում, կամ՝ րոպէի պահանջն իրանց սրտին մօտ զգալու այդ ջիլը չունեն։ Գէթ ընթերցողների թիւը մեր կեանքի ու մահվան խնդրի շուրջը աճէր. հինգ կոպէկների գումարումն էլ այդ պէտքը լաւապէս լցնելուն կը նպաստէր. սակայն այդ էլ չը կայ։ Ի՞նչ լաւ է պատշաճում մեզ առակը. «Տանձն ինքն իրան վայր ընկնէր մեր՝ բերանը, կոթն էլ վեր»։

Բայց մենք գանք մեր աղքատիկ գործին և լսենք եւրոպական մամուլի դղրդոցը մեր խնդրի շուրջը։

* * *

Բեռլինի «Die Hilfe» շաբաթաթերթի մէջ Ewald Stier-ն է գրում (5 յունիսի 1913 № 23)։

«Եթէ առաջիկայ խաղաղութիւնը Բալկաններում Եւրոպային մի տևական հանգստութիւն բերէ պրծնի, այն ժամանակ նա ոչ միայն Եւրոպական Թիւրքիայի խնդիրն է լուծելու, այլև Ասիականի վրա աչքը դարձնելու պարտքի տակ է։ Զի ոչ նուազ նշանակութիւն ունեն այսօր այնտեղ մեծ պետութիւնների դիմադիր շահերը և այն կէտը, որի վրան ու շուրջը պտտի է գալու երկանաքարը, որ հայկական խնդիրն է։ Դա է մօտալուտ ապագայի համար ընդառաջ ցցված խնդիրը իր քաղաքական նշանակութեամբ։

«Հայերի դժբաղդութիւնն է, որ նրանք միևնոյն երկրում բնակված են քիւրդերի հետ, որոնք շահաւէտ հայի աշխատութեան արդիւնքի, որպէս և նրա կնոջ վրա նայել են ինչպէս իրանց արդար աւարի վրա։ Աբդիւլ-Համիդը, որ հայերից երկիւղ էր կրում, կազմակերպեց և զինեց քիւրդերին իբրև անկանոն հեծելազոր, մինչ միևնոյն ժամանակ հայերին արգելված էր զէնք կրելը. բացայայտ է բաւական, թէ ինչ սոսկալի պայման ստեղծվեց։ Սահմանադրութեան հռչակումից յետոյ հայերը երիտասարդ-թիւրք կառավարութիւնից հանգիստ և ապահովութեան բարիք յուսացին։ Մէկը միւսին յաջորդ կառավարութիւնները չը թերացին խոստումներ անելուց։ Սակայն ոչինչ բարի չը պատահեց։ Նաև այսօր չը կայ Հայաստանում կեանքի և ստացուածքի ապահովութիւն. երկրում տիրողը սարսափն է։ Հայերի դրութիւնը երիտասարդ-թիւրքութեան ժամանակում աւելի ևս վատացաւ, երբ Աբդիւլ-Համիդի անկումից յետ հազարաւորներ, որոնք կոտորածների պատճառով արտասահման էին փախել, այժմ յետ էին դարձել փաստաթղթերը ձեռքներին իրանց գոյքերի յետ ստացումը պահանջելու։ Սակայն իրանց ունեցածին տէր դառան քիւրդերին և թիւրքերին։ Այդու է բացատրելի մեծ թիւը վերջին տարիներում Հայաստանում տեղի ունեցած վէճերի և սպանութիւնների։ Այս հանգամանքում ևս կառավարութիւնը, չը նայած իր շատ առաջադրութիւններին, դեռ ամենափոքր դարմանն անգամ չէ արել։

«Կարելի չէ հայերին մեղադիր լինել, եթէ նրանք այդ ամենից վերջապէս խոնջ՝ դատարկ խոստումների սպասելու չը մնան։ Ներկայ Կաթողիկոսը, ժողովրդի հոգևոր պետը Էջմիածնում, մի առանձին պատուիրակ, եպիսկոպոս Մեսրոպին, Պետերբուրգ է ուղարկել, ռուսաց կառավարութիւնը հայերի համար միջամտութեան դրդելու. դրա իսկ համար եւրոպական երկիրներում յանձնաժողովներ են կազմվել՝ մեծ պետութիւններին հաւանեցնելու նոյնանման քայլ անելու։ Ռուսաց կառավարութիւնը պարզել է՝ ջանք անել պահանջված բարեփոխութիւնները մտցնել տալու. հէնց որ բալկանեան կռիւը վերջ առնէ և քաղաքական դրութիւնը բարւոքվի, օրակարգի մէջ կը մտցվի այդ խնդիրը։ Պարզորոշ է պատասխանը։ Յարմարաւոր դէպքին կը սպասէ Ռուսաստանը Հայաստան ոտք կոխելու համար։ Այդու հայկական խնդիրը, քաղաքական խնդիրների շարքում, մէջ կը գայ Գերմանիայի համար ևս, խնդիր՝ որ դրանից առաջ մարդկութեան և քրիստոնէութեան բան էր։ Այդ խնդիրը բոլորովին որոշակի հրապարակի վրա կը դնէ Ռուսաստանը, և Գերմանիան շատ լաւ կանէ կանխաւ նրա համար պատրաստվելու։

«Ռուսաստանը ուզում է Հայաստանը ձեռք բերել. այդ մասին ոչ մի կասկած լինել կարող չէ։ Ուստի նրան ցանկալի է անհանգստութիւնն Հայաստանում, որ հիմք ունենայ ներս մտնելու։ Իր զինքերը սահմանի վրա պատրաստ են առաջ խաղալու։ Ուրիշ ոչ մի պետութիւն ի վիճակի չէ Հայաստան զօրք ուղարկելու։ Դարձեալ ոչ մի պետութիւն այնքան իրաւունք ունի հայկական անպատեհութիւնների համար անհանգիստ լինելու։ Ռուսաստանում ապրում են մէկ միլիոնից վեր հայեր. ժողովրդի կենտրոնը, Էջմիածինը, Ռուսաստանումն է. այդտեղից էլ է Կաթողիկոսի պաշտօնական խնդիրը։ Ռուսաստանը նաև իր հպատակներից հազարաւորներին ունի Թիւրքական Հայաստանում։ 1895/96-ի կոտորածների միջոցին Ռուսաստան անցած հայերի մեծ մասը ռուսաց հպատակներ դարձան։ Արդ՝ նրանից էլ մեծ մասը վերադարձած է հին հայրենիքը։ Կը բռնաբարվե՞ն դրանք քիւրդերից, ինչ կարող է ամեն օր պատահել, և չի կարող թիւրքական կառավարութիւնը պաշտպանել նրանց, որ ամենևին կասկածից դուրս է. այդ դէպքում Ռուսաստանը ներս մտնելու բոլորովին իրաւացի հիմք ունի։ Ուստի պատերազմի աւարտից վերջը անհանգստութեան խլրտումը, գուցէ և ոչ անհաւատալի մի մեծատարած կոտորածի երկիւղը կայ։ Մեծ ամբոխը բալկանեան կռիւը ընդունել է կիսալուսնի և խաչի կռիւ։ Շատ կողմերից մահմեդականների կրօնական կրքերը գրգռվելու են քրիստոնեաների դէմ։ Զմիւռնիայից լուր կայ, որ այնտեղ Գիւմիւլջինայի նախկին պատգամաւորը, Իսմայիլ Հակկը-բէյը, փետրվարի սկզբում մի ճառ է ասել, որում հետևեալ խօսքերը եղել են. «Կոտորեցէք ձեզ պատահող քրիստոնեաներին բոլորին, վասնզի կարող է անկասկած լինել, որ նրանք բոլորը, որոնք քրիստոնեայ անունն են կրում, մուսուլմաններից հազարաւորների արիւնն են թափել»։ Զմիւռնիայում խօսքը յոյների մասին է։ Բայց ո՞վ կը հաստատէ, որ կոտորածները նրանցով միայն կը սահմանափակվեն, քանի որ այնքան շատ այրեցիկ նիւթ է կիտված Հայաստանում, և միայն մի կայծ է պէտք, որ մի ամբողջական հրդեհ բորբոքվի։

«Ահա որտեղից է, որ հայ ազգաբնակութիւնը թողնելու չէ, որ այսօր առաջվայ պէս պարզօրէն իրան ջարդեն։ Դաշնակցական ընկերավարական յեղափոխական կուսակցութիւնը ժողովրդական մի կազմակերպութիւն է գոյացրել, որ մինչև յետին շէնն է հասնում։ Նա այժմ շտապեցնում է համայնական զինաւորումը, և այդ բանի համար նա Ռուսաստանում է օգնութիւն գտնում։ Ռուսաստանն այդտեղ մի կրկնակ խաղ է անում։ Վաղուց է արդէն, որ քիւրդերը զինված են ռուսական զէնքերով, որոնք բազմութեամբ սահմանից այն կողմը տարված կը լինեն։ Այժմ բոլորովին համապատասխան կերպով դաշնակցականների ռուսական խմբերին թոյլ է տրված Ռուսաստանում զէնք գնել։ Արտաքոյ կարգի մեծ է հաւանականութիւնը, որ Թիւրքական Հայաստանում, նոյնպէս և Ռուսաստանի սահմանների վրա, կռիւ է լինելու։ Այդ կը տայ Ռուսաստանին ներս արշաւելու հիմք։

«Գերմանիան պէտք չէ թողնէ, որ բանն այնտեղ հասնի։ Նա ինքն էլ հզօր շահեր ունի Հայաստանում։ Աւելի շատ, ի հարկէ, Փոքր-Հայք կոչվածումն են նրանք, Կիլիկիայում, որի գլխաւոր քաղաք Ադանան հանգուցակէտն է Բաղդադի երկաթուղու, և նրա շրջակայքում էլ գերմանական մշակոյթի մեծ գործ, 500,000 հեկտար տարածութեան ոռոգումը, Կոնիայում եղածի տասնապատիկը, ձեռնարկվելու վրա է։ Մեծ-Հայքում լինելիք խռովութիւններն ամենայն հաւանականութեամբ թևարձակ կանցնեն և Փոքր-Հայք։ Բայց հայկական բնիկ երկիրն ևս շրջափակվելու է Բաղդադի երկաթուղուց, Ուրֆան և Դիարբէքիրը առանց երկաթուղու հետ կցվելու չեն մնայ։ Ապա գալիս են քրիստոնէական սիրոյ գերմանական գործերը հայերի մէջ. գերմանական արևելեան առաքելութեան հիմնարկութիւնները Ուրֆայում և «Արևելքում քրիստոնէական սիրոյ գործերի նպաստող գերմանական ընկերութիւնների» ձեռնարկութիւնները, որոնց ելևմտացոյցը կէս միլիոնից վեր է։ Բայց նախ քան ամենայն ներկայ րոպէում Գերմանիան չէ կարող թոյլ տալ, որ Ասիական Թիւրքիայի բաժանումը որևիցէ ւանդ որ ըստ երևոյթին դա կեղտոտ աստառ է կրում։

Տարվայ վերջը այդ խըրտումները ծայրայեղութիւնների են հասնում, այնպէս որ ուսումնարանի հոգաբարձութիւնը, միացած՝ տեղիս հոգևոր կառավարութեան հետ, գալիս է այն համոզման, որ բարւոք է համարում արձակել ուսուցչական ամբողջ կազմը, նըպատակ ունենալով ընդմիշտ վերջ դնել ամեն ինչի, որպէսզի առաջներիս ուսումնական տարին դպրոցի կեանքը մտնի իր նորմալ դրութեան մէջ։ Կազմվում է արձանագրութիւն, որպիսին և ուղարկվում է Թիֆլիս առաջնորդին։ Առաջնորդը քննելով գործը պահանջում է լրացուցիչ տեղեկութիւններ, ինչպիսին է ուսուցիչների առանձին-առանձին խարակտերիստիկան ուսումնական տարվայ ամբողջ ընթացքում։ Այդ խարակտերիստիկաները տեղիս հոգևոր կառավարութիւնը ուսումնարանի հոգաբարձութեան հետ միասին կազմում և ուղարկում է առաջնորդին։ Առաջնորդը դրանով ևս չէ բաւականանում, վերցնում անձամբ գալիս է տեղս, որպէսզի ինքն անձամբ քննէ գործը։ Առաջնորդը իր այդ սեփական քննութեան եզրակացութիւնը տեղս չէ յայտնում, այլ խոստանում է այդ յայտնել Թիֆլիսից։

Միայն մի բան պիտի յիշատակել այստեղ, որ առաջնորդը գոհ է մնում հոգաբարձական կազմից, ձևակերպելով այդ՝ հասարակութեան առաջ այսպէս. «Շատ ուրախ եմ՝ տեսնել դպրոցական գործի գլուխ անցած այդպիսի թարմ և պիտանի ույժեր»...

Սակայն ինչ է պարզվում այժմս. սրբազան առաջնորդը իր վճիռը և եզրակացութիւնը Թիֆլիս ևս չէ կարողանում անել, և այդ յանձնում է անել—ոչ պակաս ոչ աւել—Արշակ Ջամալեանին, «Հօրիզօնի» խմբագրատնից։ Դա աւելի քան մեծ սիւրպրիզ է մեզ գանձակեցիներիս համար. բայց սիւրպրիզ լինելուց դուրս դա մի վերին աստիճանի տխուր փաստ է մեր հայկական իրականութեան մէջ. դա բնորոշ կերպով ցոյց է տալիս, թէ ինչքան մենք ապիկար ենք այս կամ այն վարչական մարմինն ունենալու։ Սրբազան առաջնորդը իր վճիռը արձակելու տեղ ուղարկում է Գանձակ մի ոչ պաշտօնական մարդու, որոշ կուսակցութեան պատկանող, և այն էլ տալով նրա ձեռքը նամակ, մանդատ, որով նա պիտի ինչ անի, ծխական ժողով նշանակի հոգաբարձական նոր կազմ ստեղծելու համար։ Հարց է դրվում. ինչ կապ ունի այդ նոր ընտրութիւնը սրբազանի քննութեան առած գործի հետ. այդ ինչ ներշնչում է, որ գալիս է որոշ խմբից և որին ենթարկվում է մի այնպիսի բարձր աստիճանաւոր, ինչպիսին է թեմի առաջնորդը։

Եթէ սրբազան առաջնորդը ենթարկված չէ որոշ խմբի և որոշ դիտումներով չէ ղեկավարվում նոր հոգաբարձական ընտրութիւններ նշանակելով, հապա ինչով բացատրել այն վարկաբեկող փաստը, որ այս դէպքում թողնվում է մի կողմը տեղիս պաշտօնական հոգևոր մարմինը, փոխանորդը, և ասպարէզ է դուրս գալիս մի ՚ոմնիցէ Արշակ Ջամալեան։

Վերջինս այնպիսի համարձակութիւն է ունենում, որ երբ նրան տեղիս փոխանորդը մի քանի ծխականների ներկայութեամբ յայտնում է իր կասկածանքը և թերահաւատութիւնը դէպի վերջինիս յանձնված միսիան, նա պատասխանում է. «Եթէ ես ձեզ հետ խօսում եմ, պիտի համոզված լինէք, որ ձեզ հետ խօսում է թեմիս առաջնորդը»։ Եւ այդպիսիներին է, որ յանձնվում է որոշ գործ, մի ամբողջ ծխական համայնքի գործ, մի ամբողջ դպրոցի գործ։ Եւ այդպիսիներին է ենթարկված, ըստ երևոյթին, թեմական առաջնորդը։ Գուցէ մենք սխալված ենք, թող այն ժամանակ մեզ բացատրութիւն տան։ Սակայն տգեղ փաստը մնում է այն, որ հոգևոր գործում անտես է առնվել տեղիս պաշտօնական մարմինը, որին ընտրել է ամբողջ հասարակութիւնը և որին ժողովուրդը հաւատում է, հաւատում է հետևապէս և նրա գործելակերպին։ Թողնել այդ պաշտօնական մարմինը և յանձնել գործը Արշակ Ջամալեաններին, դա թէ ցաւալի է և թէ լիազօրութիւնից դուրս է։

Յովս. Տէր-Վարդանեան

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բնագէտների և բժիշկների XIII համագումարը վերջացաւ Թիֆլիսում։

Իսկապէս դա մի խոշոր հասարակական երևոյթ էր Թիֆլիսի առօրեայ անհետաքրքիր կեանքում։

Դեռ տարիներ առաջ ես լսել էի, որ ոչ մի պրոֆեսոր չէ համաձայնում Կովկաս գալ, որովհետև Ռուսաստանում այն համոզմունքն է տիրում, թէ Կովկասի քաղաքների փողոցներում համարեա ամէն օր հրացանաձգութիւն է տեղի ունենում...

Ու միայն վերջերս, շնորհիւ Կովկասի զանազան տեղերից Ռուսաստան մեկնած հասարակական գործիչների պրոպագանդայի, շնորհիւ մամուլի, այդ արտառոց համոզմունքը սկսում է չքանալ։

Իսկ բնագէտների և բժիշկների համագումարը եկաւ ապացուցելու, թէ Կովկասում սովորական աւազակութիւնների, սպանութիւնների ու զանազան յանցագործութիւնների կողքին, որոնցից զուրկ չէ անգամ լուսաւոր Անգլիան, կան բազմաթիւ մարդկանց խմբեր, որոնք, զինված գիտութեան պայծառ լոյսով, հետամուտ են կովկասեան ժողովրդական մասսաները առաջնորդելու դէպի վեհը, գեղեցիկը ուսումը, զարգացումը, կատարելագործումը։

Եւ համագումարի պատկառելի անձինք իրանց առաջին ու վերջին խօսքը ասացին, թէ Կովկասը այն աստիճան հասունացել է, որ արժանի է իր երազած բարձր կրթական հաստատութեան և զեմստվոյին...

Երանի՛ էր գիտութեան մարդկանց այդ եզրակացութիւնը լսելի դառնայ նրանց, որոնցից և կախված է այդ երկու՝ հասարակական կեանքի առաջադիմութեան համար անհրաժեշտ՝ ազդակների ու գործօնների իրականացումը...

⁂

Համագումարի անդամների մեծագոյն մասը առաջին անգամն էր լինում Կովկասում և մասնաւորապէս Թիֆլիսում։ Եւ բնականաբար, նրանք շատ պէտք է հետաքրքրվէին տեղական ազգերի սովորութիւններով, բարքերով, կուլտուրայի զանազան արտայայտութիւններով։

Այդ հանգամանքը ըմբռնել էին առանձնապէս մեր հարևան վրացիները, որոնք եռանդով գործեցին ցոյց տալու եկւոր հիւրերին այն ամենը, ինչ որ վրացական է։ Իսկ ինչ արին հայերը. գրեթէ ոչինչ, կամ աւելի ճիշդ, ուղղակի ոչինչ...

Երկաթուղում նստած ռուսաստանցի հիւրը մտածում էր. Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան կէսը հայեր են, առևտուրը հայերի ձեռքումն է, հասարակական ու քաղաքացիական հաստատութիւնների և հիմնարկութիւնների գլուխ կանգնածների մեծ մասը հայեր են, Թիֆլիսում կան բազմաթիւ հայկական ընկերութիւններ, դրամատէրերի խոշոր մասը հայեր են, և այլն, և այլն։ Ապա ուրեմն մենք շատ բան կը տեսնենք հայկական, որի մասին գաղափար ունենք շատերս միմիայն «Ծիծեռնակ» երգից։

Բայց ոչինչ չը տեսան։

Չը նայած որ կազմակերպիչ մարմինների ղեկավարները հայեր էին...

Համագումարի բացման օրը շնորհաւորութիւնների թւում միմիայն մի հայկական խօսք արտասանվեց (Ա. Քալանթար ողջունեց Հայ Գիւղատն. և Տնտեսն. Ընկ. կողմից). «Т. Л.» թերթը չը բարեհաճեց յիշատակել այդ մասին. արդեօք մոռացութեա՞մբ, թէ դիտմամբ...

Հայերի ձեռքով հիմնված Արտիստական Ընկ. այգում օտարերկրեայ հիւրերը տեսան ու լսեցին վրացական ու թիւրքական ազգային արտայայտութիւններ։ Հայկական համարված ժողովարանում նրանք հէնց դռնից լսեցին վրացական խօսակցութիւն։

Ներսիսեան դպրոցի վարչութիւնը անհեռատես գտնվեց իր շինութեան մէջ կազմակերպել համագումարի ցուցահանդէսներից մէկը, որով հնարաւորութիւն կը տար Ռուսաստանից եկած անձանց տեսնել նոր փառահեղ շէնքը։ Միշտ արտաքին փայլին սիրահար Կ. Հ. Բ. Ընկերութիւնը զլացաւ ծանօթացնել համագումարի անդամներին իր «բազմակողմանի» գործունէութեան հետ։ Հայոց Ազգագրական Ընկերութիւնը գոնէ ցոյց տար իր թանգարանը։

Առաջնորդարանը նախաձեռնութիւն չը վերցրեց դրդելու հայկական դպրոցական հաստատութիւններին յատուկ ներկայացուցչութեամբ մասնակցելու մանկավարժական սեկցիային։

Զորն ասեմ, զորն խոստովանիմ։

Մեր մեծամիտ ամբարտաւանութիւնը բըլէֆ կերպով միշտ էլ երևացել է ներքին անվերջ երկպառակութիւնների, վէճերի ու անձնական բանակռիւների մէջ։

Ողորմելի հայ հասարակութիւն...

Եւ բոլորովին զարմանալի էլ չէ, երբ «Т. Л.»-ում յունիսի 26-ին կարդացի հետևեալ հեռագիրը Բաթումից. «Խնդրում ենք «Т. Л.»-ի խմբագրութեան չը մերժել տպելու, իսկ միւս թերթերին խնդրում ենք արտատպել։ Հեռանալով Կովկասից, բնագէտների և բժիշկների XIII համագումարի մի խումբ անդամներ ուղարկում են իրանց ողջոյնը ու անկեղծ շնորհակալութիւնը Կովկասի ժողովուրդներին առհասարակ եւ վրացի ազգաբնակութեանը մասնաւորապէս, այն սրտագին հիւրասիրութեան համար, որ ցոյց տուեց մեզ Թիֆլիսում և նրա շրջակայքում գտնված ժամանակ»։

Հեռագրի տակ ստորագրել են 36 ռուսներ։

Անհրաժեշտ դէպքերում անգործ մնալու հայի այդօրինակ յատկանիշը պէտք է որոնել ժամանակին Թիֆլիսի զուտ ազգային կեանքի անկազմակերպված, անկերպարան վիճակի մէջ...

—

Համագումարի վերջին օրը, մի խենթ զուգադիպութեամբ, ասիական անպարտաճանաչութեան ու թերի վերաբերմունքի մի նմուշ ևս եղաւ. այդ այն է, որ Գոլովինսկի պրոսպէկտի վրա փլվեց օրը ցերեկով քաղաքային տունը և հետևանքում ստացվեցին մարդկային զոհեր։

Որքան ցաւալի է տեղի ունեցած դժբաղդ պատահմունքը, որ ամեն տեղ էլ կարող է լինել, այնքան պարսաւելի, չափազանց խոտելի է մութ ույժերի հանդէս գալը այդ առիթով։

Դեռ վերջերս միայն հարթվեց այն միջադէպը, որ ստեղծեցին վրացի ազգայնական հոսանքները գլուխ ունենալով Գոտուային և Սուլաբերիձէին և ընկ. ընդդէմ հայ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի և առհասարակ քաղաքային վարչութեան հայ ղեկավարների (որոնք միայն անունով են հայ), ըստ որում այդ ազգայնական պարոնների պարտութիւնը կատարեալ եղաւ, որ ահա մի դժբաղդ պատահար արձակեց վրէժխնդրութիւնը սրտերում կուլ տուած վրացի շովինիստների լեզուն...

Առանց չափ ու սահման ճանաչելու՝ այդ տխրահռչակ ասպետները նետ ու աղեղ են գործածում դարձեալ «սօցիալիստների», իմա հայերի և մասնաւորապէս կրկին «լորդ-մէր» Ալ. Խատիսեանի դէմ, չըմբռնելով, կուրացած զայրոյթից, թէ դրանով շոյում, փայփայում ու գրգռում են տգէտ մասսաների ազգամոլ կրքերը...

Մենք առհասարակ ներհակ ենք «սօցիալիստ» ինչպէս և Սաբուրթալոյի կամ Քարթլինիայի ու Կախեթի իշխանաւոր հարուստներին, որոնք անպայման անցել են աշխատաւոր դասակարգերին շահագործելու ճանապարհով իրանց անձնական վայելքն ու երջանկութիւնը ապահովելու համար, սակայն չը պէտք է, երես դարձրած արդարութիւնից, անձնատուր լինենք զուտ շովինիստական տենդենցներին։

Ինչումն է կայանում օրինակ «լորդ-մէր» Խատիսեանի յանցանքը, որ յամենայն դէպս օտար չէ երբեմն հէնց վրացիներին սիրաշահելուց։ Դժբաղդ պատահարը գուցէ նըկատվի անփոյթ վերաբերմունքի հետևանք այն անձանց կողմից, որոնց և յանձնված էր տան վերանորոգութեան վրա ունենալիք հսկողութիւնը։ Թող իսկական յանցաւորները կրեն իրանց արժանի պատիժը անմեղ արեան համար։ Բայց այդ հանգամանքը մի ընդարձակէք, պարոններ, չափաւորեցէք ձեր կրքերը և պատճառ մի դառնաք երկու հարևան ժողովուրդների խուլ անտագոնիզմ առաջացնելուն՝ որ գուցէ յանգէ աւելի վատթար հետևանքի...

Երկու շաբաթ առաջ Չերքէզովսկայա փողոցում մենք ականատես եղանք նոյնպէս մի ցաւալի դէպքի։ Դրամը չը մանրացնելու պատճառով տեղի ունեցաւ արիւնահեղ ընդհարում հայերի և վրացիների մէջ։ Նշանակալիցն այն էր, որ էլեկտրաքարշի վրացի կօնդուկտօրները և վատմանները երկաթեայ ձողերով յարձակվել էին այն մի քանի անպաշտպան հայերի վրա, որոնք կամեցել էին 3 ր. թղթադրամը մանրացնել վագօնում։

Այդ և նման դէպքերը, ինչպէս ներկայ դէպքում վրացական թերթերի և վրացիների ձեռքով հրատարակվող ռուս թերթերի յախուռն արշաւանքը կունենայ չափազանց վտանգաւոր հետևանքներ։ Իրանց ողջամիտ վրացիները պէտք է գիտակցաբար խելացիութեան դասեր տան ազգայնական զգացումներից կուրացած պարոններին, առանձին նրանց վտանգաւոր գործելակերպին և ամեն կերպ նպաստեն երկու հարևան ժողովուրդների փոխադարձ վստահութեանն ու բարեկեցութեանը։

Ով ականջ ունէ, թող լսէ... Ն.

կերպով վիճաբանութեան դրվի, իսկ այդ հետևանք կը լինէր այն բանին, եթէ Ռուսաստանը ձեռք դնէր Հայաստանի վրա։ Ֆրանսիան և Անգլիան Ասորիքում և Արաբիայում բոլորովին այլ պատրաստութիւն են տեսել քան մենք Փոքր-Ասիայում։ Ասիական Թիւրքիայի ամբողջութեան համար բոլոր պետութիւններից ամենամեծ շահն ունեցողը Գերմանիան է։

«Միակ կարելիութիւնը, Թիւրքիային իր ասիական ստացուածքը ապահովելու համար, Հայաստանում հանգստութիւնը հաստատելն է, և այդ կարելի է։ Դա երաշխաւորված է. եթէ բարենորոգութիւններ մտցվեն այնտեղ և նրանց գործադրութեան միջոցները ձեռք առնված լինեն։ Այդ էր ապաքէն Բերլինի դաշնագրութեան դիտումն էլ 1878-ին իր 61-րդ յօդուածով (համաձայնած Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածի հետ)։ Լինէր այդ յօդուածը գործադրված, խնայված կը լինէին ոչ թէ միայն կոտորածներն Հայաստանում, այլև ներկայ քաղաքական վարանոտ կացութիւնը։ Բայց Թիւրքիան ոչ մի ժամանակ բարեկարգութիւններ չէ մտցրել, և մեծ պետութիւնները, ի բաց առեալ մի երկու ակար փորձեր Սասունի 1894-ի և Զէյթունի 1896-ի ջարդերից յետոյ, այդ նպատակով Թիւրքիայից ոչ մի բան չեն պահանջել։ Դարձեալ յոյս դնել Թիւրքիայի խոստումների վրա՝ թոյլատրելի չէ Եւրոպային։ Նրանք այժմ նորից երևան են գալիս նահանգների մասնական ինքնավարութեան մասին արդէն անցեալ տարի սահմանված մի օրէնքով։ Դա բոլորովին անբաւարար է։ Մի հնար միայն կայ հանգստութիւնը վերահաստատելու. բարեկարգութիւնների գործադրութիւնը ինքն Եւրոպան պէտք է իր ձեռքն առնէ և եւրոպացի պաշտօնեաներ կարգէ Հայաստանի համար։ Հայկական վեց նահանգները՝ Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Խարփութ, Սըվազ և Էրզրում և նմանապէս Կիլիկիա պէտք է մի մասնաւոր աւտօնոմիա ունենան մեծ պետութիւնների վերահսկողութեան տակ։

«Դրա համար ներկայումս մի նախընթաց օրինակ կայ։ 1860-ին դրուզների ձեռքով մարոնիտ քրիստոնեաների կոտորումից յետ՝ Լիբանան սանջակը Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսիայի հսկողութեան տակ առնվեց, որոնց յարեցին անցեալ տարվայ դեկտեմբերին միւս երեք մեծ պետութիւնները, և նրանց վերապահվեց նահանգապետի նշանակումը, որպէս նաև «օրգանական ստատուտների» ընդունելութիւնը։ Նահանգապետը միշտ պէտք է քրիստոնեայ լինի. այժմ նա արտաքին գործերի մինիստրութեան նախկին փոխ-քարտուղար հայ Յովհաննէս-փաշա Գույումճեանն է։ Այս 50 տարիների ընթացքում Լիբանանը խռովութիւններից զերծ է մնացել և անտեսապէս անսովոր կերպով զարգանալ կարողացել է։ Այդպիսի մի կազմակերպում հայ նահանգների համար անկասկած նոյնպիսի արդիւնք կունենայ։ Դրանից Թիւրքիան ինքը միայն շահ կունենայ օգտաւէտութեամբ երկրի ոչ-աննշան գանձերի և նրա հարկատուական ույժի զօրեղ բարձրացումով։

«Կարծում ենք, թէ թիւրք պետական մարդիկ խոստովանում են, որ Հայաստանում թիւրք պաշտօնէութեան անյաջողութիւնը խիստ ակներև է։ Քեամիլ-փաշան ձեռնարկել էր Հայաստանի համար բարեփոխութիւնների մի ծրագիր ընդունելի անել, որը նախատեսում էր վեց նահանգները անգլիացի երկու վերատեսուչների ենթարկել և տեսչութեան մէջ եւրոպացի պաշտօնեաներ կարգել՝ դատաստանական, մաքսային և պօստ-հեռագրական։ Միայն պէտք է պինդ բռնել, որ այդ պաշտօնեաները ոչ մի կերպ կախումն չունենան թիւրք կառավարութիւնից։ Պաշտօնեաների ազգութեան նկատմամբ Մեծ-Հայքում Գերմանիան նուազագոյն շահն ունի. խնդիրը մեզ համար գլխաւորապէս այն է, որ այնտեղ անդորրութիւնը լրիւ պահպանվի։ Դրա փոխարէն մենք պիտի ցանկանք Կիլիկիայի տեսչութեան մէջ օրինաւոր չափով հաղորդ լինել։ Մենք կարծում ենք, թէ մեծ հիմք ունենք յուսալու, որ արտաքին գործերի պաշտօնատունը Կ. Պոլսի մեր դեսպանից ճիշդ տեղեկացած է, որ վերջին ամիսներում գերմանական արևելեան քաղաքականութիւնը անգլիականի հետ ձեռն ի ձեռն է ընթացել և ոչ մի անվստահութիւն երկու կառավարութեան միջև չի տիրում այդ խնդրում, որ և մեզ առանձին իմն վստահութիւն է տալիս, որ պարզումը հայկական խնդրի, որ հրապարակ է գալու և պէտք է գայ, յանգելու է հայերի, որպէս և մեզ համար մի հաւասար աջող արդիւնքի»։

⁂

Այսպէս ուրեմն, մեծ պետութիւնների հասունացած շահերը հայկական խնդրի լուծումն են պահանջում։ Այդ շահերը աւելի և աւելի առաջ մղելու և պահպանելու պէտքը անդորրութիւն և առաջադէմ մտաւոր, քաղաքակրթական և անտեսական զարգացում է պահանջում այն երկիրներում, ուր ձըգտում ու ծաւալվում են նրանք, այդ շահերը։ Ահա այժմ սրանց ասպարէզն է դառնում մեր երկրի այն մասը, ուր տառապանքների տակ հիւծված ու մաշված՝ մենք մեր շունչը բերինք հասցրինք մինչ այս օրը։ Տառապանքը մեզ մաշեց, բայց չանհետացրեց, որովհետև մեր չարքաշ վաստակաւորութեամբ մենք մեզ տառապեցնողին անունդ մատակարարողն էինք. և այդ տառապեցնողը, իր բոլոր բռնութեամբն ու անմտութեամբն հանդերձ, այդքանը ըմբռնել էր, որ եզն եզատիրօջը պէտքական է։

Այժմ Եւրոպան է գալիս մեր գլխին. նա՝ որ գիտէ առաւել շահվելու համար ոչ թէ անմիտ ապշութեամբ և անհաշիւ գազանութեամբ տառապեցնել, այլ աւելի և աւելի բարւոք վիճակի առաջնորդելով՝ աւելի և աւելի շահվել։

Բայց Եւրոպան կարող է մեզ մի նոր վտանգ բերել, այն է՝ մեր հայկական խնդրի հետ լուծել նաև մեզ. լուծել և անհետացնել այնպէս, ինչպէս լուծվել ենք Լեհաստանում և այլուր, ուր տիրապետողի քաղաքակիրթ ույժերն աւելի բարձր են եղել։ Թիւրքը մեզ չը կլլեց, բայց տևտոնը կարող է մեզ կլլել։

Ուրեմն ազգային գիտակցութեան բարձրացումը մեր արթուն ջանքերի առարկան պիտի անենք։

Հայ

ՆՈՄԱԿՆԵՐ ՆԱԽԹԱՇԽԱՐՀԻՑ

V

Ժողովրդական Տան հայկական ներկայացումները

Բաքու, 17 յունիսի

Նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև-Քաղաքի Ժողովրդական Տունը յայտարարել է իր գործունէութեան հաշիւը։ Այդ հաշւից երևում է, որ այս տարի Ժողովրդական Տունը տուել է հայերէն լեզուով 21 ներկայացում և 3 երեկոյթ, որոնք կազմում են Ժողովրդական Տանը տուած բոլոր ներկայացումների 40%։

Հայերէն ներկայացումների մի այդպիսի մեծ քանակութիւն իր գոյութեան ընթացքում երբեք չէ տեսել Ժողովրդական Տունը և եթէ այդ ներկայացումները որոշ, կազմակերպված խմբերի ներկայացումներ լինէին, կարելի էր միայն ուրախանալ, որ հնարաւորութիւն է տրվում Սև-Քաղաքի բանւոր ու արհեստաւոր դասակարգին տեսնելու հանրամատչելի ներկայացումներ, կապվելու թատրոնի հետ և նրան մի անհրաժեշտ հիմնարկութիւն դարձնելու իր կեանքում։

Սակայն դժբաղդաբար այդպէս չէ։

Ժողովրդական Տանը սեզոնի ընթացքում որևէ կազմակերպված խումբ չէ եղել, պարբերական ներկայացումներ տուող, ներկայացումներ, որոնք կարողանային հասարակութեան մտքին ու սրտին որևէ բան ասել, որոնք կարողանային աջակցել մեր հասարակ ժողովրդի մտաւոր մակարդակը բարձրացնելու, այլ նրանք համարեա թէ բոլորն էլ տրվել են որոշ նպատակով, նիւթականապէս օգտվելու համար. դրանով կարելի է բացատրել և հարկէ այն հանգամանքը, որ 21 ներկայացումից 13-ը, այսինքն համարեա թէ $^2/_3$-ը, եղել են մըտքից ու բովանդակութիւնից զուրկ պատմական պիէսներ, ինչպէս «Սամուէլ», «Արշակ Երկրորդ», «Աշոտ Երկաթ», «Ասլան Բալասի» և այլն և այլն, որոնք միայն հասարակութեան ստոր ինստինկտները գրգռել կարող են, ուրիշ ոչինչ։

Ցաւալի է այդ, շատ ցաւալի, որովհետև Ժողովրդական Տունը իր տրամադրութեան տակ ունի հայ հասարակ դասակարգով բընակված մի ամբողջ հսկայական ռայօն, որը քաղաքից հեռու լինելով զրկված է քաղաքի հայ ներկայացումներին յաճախելու հնարաւորութիւնից և միակ մատչելի տեղը թէ յարմարութեան տեսակէտից և թէ էժանութեան կողմից՝ այդ դասակարգի համար, Ժողովրդական Տունն է։ Բացի այդ՝ Ժողովրդական Տունը ամեն յարմարութիւններ ունի. ունի հրաշալի, մեծ բեմ, շքեղ դեկօրացիաներ, հարուստ կահաւորութիւն, մի խօսքով ամեն յարմարութիւններով օժտված մի գեղեցիկ թատրոն է։

Կար ժամանակ, երբ Ժողովրդական Տունը ունէր սիրողների մի գեղեցիկ կազմակերպված խումբ, որը իր կանոնաւոր ներկայացումներով կարողանում էր դէպի թատրոն գրաւել հասարակութեանը. սակայն ժամանակի ընթացքում, անբարեյաջող հանգամանքների շնորհիւ, այդ խումբը քայքայվեց, և այժմ նրա փշրանքներն են մնացել և այն էլ զանազան բաղդախնդիր անձնաւորութիւնների ձեռքին խաղալիք և անձնական շահերի ասպարէզ։

Այս տարի, սեզոնի վերջում մի փորձ արվեց վերսկսելու այդ խմբի («Բնարիկ») գոյութիւնը. խմբի կազմի մէջ մտան տեղական աչքի ընկնող սիրողները, կազմակերպվեցին երկու գեղեցիկ աջող ներկայացումներ, որոնք հասարակութեան վրա ամենագեղեցիկ տպաւորութիւն թողեցին. և սակայն ներքին անվերջ թիւրիմացութիւնները և խմբի վարիչների միապետական ձգտումները պատճառ դարձան այդ գեղեցիկ գործի տապալմանը...

Երկար տարիներ կանոնաւոր ներկայացումներ տեսած չը լինելով՝ հասարակութիւնը մի տեսակ սառել է դէպի Ժողովրդական Տան ներկայացումները, և նրան թատրոն կարելի է գրաւել միայն կամ զոռով տոմսակ ծախելով, կամ թէ պատմական անբովանդակ պիէսներով, իսկ կեանքից վերցված և կանոնաւորապէս տրվող պիէսները միշտ էլ վնաս կանեն, ինչպէս որ ցոյց տուեց այս տարվայ փորձը, վերակազմված «Բնարիկ» խմբի տուած վերջին երկու ներկայացումները, որոնք թէ անսամբլի, թէ շքեղ ու ճաշակով դրված լինելու կողմից առաջին ներկայացումները կարելի է համարել ամբողջ սեզոնում և որոնք երկուսն էլ սակայն դեֆիցիտներ ունեցան և այդ դեֆիցիտները կը լինեն՝ մինչև որ կարելի լինի վերջապէս հասարակութեանը կապել թատրոնի հետ։ Առանձին դեբիւտանտների, կամ այս տարվայ խմբերի վրա յոյս դնել չի կարելի, որովհետև փորձը ցոյց տուեց, որ նրանց բոլորի նպատակն էլ միայն նիւթապէս օգտվելն է եղել։ Ժողովրդական Տունն էլ ինքը խումբ կազմակերպել չէ կարող, որովհետև այդ նպատակի համար նաւթարդիւնաբերողների խորհուրդը ոչ մի գումար չէ յատկացնում, իսկ մեր Կուլտուրական Միութիւնն էլ իր քթի տակ գտնվող Բաքուի ռայօնները թողած՝ իր գործունէութիւնը հեռաւոր գաւառներն է տեղափոխել...

Ահա այդ բացը լրացնելու համար է, որ գործը հասկացող մի քանի անձնաւորութիւններ ներկայումս զբաղված են Ժողովրդական Տան ապագայ հայկական կանոնաւոր ներկայացումների կազմակերպութեան խնդրով։ Մտադրութիւն կայ գործը կանոնաւոր հիմքերի վրա դնելու համար հիմնել մի ընկերութիւն, որը հոգայ նիւթականի մասին, որպէսզի հնարաւորութիւն լինի վարձատրել սիրողներին ու դերասաններին և այդպիսով կապել նրանց թատրոնի հետ։ Ընկերութեան կանոնադրութիւնը ներկայումս կազմվում է և շուտով կը ներկայացվի կառավարութեան հաստատութեանը. այնուհետև մինչև սեզոնի սկիզբը կազմակերպողները մտադիր են պատրաստութիւններ տեսնել, ռեպերտուար կազմել, նիւթական միջոցներ ձեռք բերել, խումբ կազմակերպել և առաջիկայ սեզոնից ժողովրդական ներկայացումների գործը կանոնաւոր հիմքերի վրա դնել ոչ միայն Սև-Քաղաքի Ժողովրդական Տան, այլ ընդհանրապէս Բաքուի շրջաններում, Սև և Սպիտակ Քաղաքներում, Բալախանի, Բիբի-Հէյբաթ և այլն։

Կատարեալ աջողութիւն ենք ցանկանում այդ նոր և գեղեցիկ ձեռնարկութեանը, որին գուցէ աջողվի ազատել հասարակութիւնն այն խայտառակ կոմեդիաներից, որոնք կատարվում են Բագուի բաժիններում և որոնք «Ժողովրդական Ներկայացումներ» անուն են կրում։

Վաղարշակ Թումանեան

ԾԱՅՐԱՅԵՂ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԷԼ ՄԻ ԲԱՆԻ ՆՄԱՆ ՉԷ

Ախալքալաք, 10 յունիսի

Առ հասարակ մենք, ախալքալաքցիներս, սիրում ենք պարծենալ, որ տուել ենք բաւական թւով բժիշկներ, իրաւաբաններ, ճարտարապետներ, ուսուցիչներ, և այժմս էլ համալսարաններում և ուրիշ բարձր դպրոցներում շատ ուսանողներ ունենք. սակայն մինչև այսօր եւրոպական մտքով ոչ մի մասնագէտ երաժիշտ չենք տուել և այսօր էլ կոնսերվատորիաներում և երաժշտական դպրոցներում ոչ մի ուսանող չունենք։

Դա իսկապէս տարօրինակ է։

Դրա պատճառը, մեր կարծիքով, այն է, որ մենք չափից դուրս անտարբեր ենք դէպի մեր երաժշտական ընդունակութիւնները։ Ամեն բանի վրա կոպէկի տեսակէտից նայելով, մենք յաճախ խեղդում ենք մեր երեխաների մէջ գտնվող բնածին գեղարուեստական ընդունակութիւնները։

Մեր երկրի զաւակն էր Աշըղ-Ջիւանին, որ բնութիւնից օժտված էր ընդունակութիւններով։ Փոխանակ երաժշտական աշխարհում յայտնի մարդ դառնալու և իսկապէս Ջաւախքի պարծանքը լինելու, նա զոհ գնաց մեր խրակնութեան։ Ջիւանու ընդունակութիւններն ու ձգտումները նրա փոքր ժամանակ ոչ ոք չուսումնասիրեց, նրա վեհ հոգին ոչ ոք չը հասկացաւ, և գուցէ կային այնպիսիները, որոնք նկատում էին Ջիւանու մէջ բարձր ընդունակութիւններ, սակայն ոչ ոք ժամանակին Ջիւանուն չօգնեց, և նա զուրկ մնալով գիտական և երաժշտական իսկական ուսումից՝ մեր մթնոլորտի մէջ խեղդվեց, աշուղ դարձաւ։

Ջիւանու պէս մի շարք ուրիշ աշուղներ՝ Փօստօ, Աղճօ, Կիրօ, Սեդրոս, Աթան, Աբուլ նոյնպէս հասարակ մարդիկ չէին։ Նըրանք նոյնպէս իրանց ընդունակութիւններով ու ձգտումներով ուրիշ երկնակամարի տակ գուցէ յայտնի մարդիկ դառնային։ Պարզ է, որ նրանք, եթէ կարողանային ժամանակին գիտական և երաժշտական հիմնովին ուսում առնել, աշուղ չէին դառնալ և Ջաւախքն էլ գուցէ ունենար իր Կարա-Մուրզաները, Եկմալեանները, Սպենդիարեանները, Նալբանդեաններն ու Կոմիտասները։

Իսկ առ այժմ ոչ մի ջութակահար, ոչ մի երգիչ, ոչ մի դաշնակահար, մինչև անգամ ոչ մի խմբապետ Ջաւախքը չէ տուել։ Անկասկած հիմա էլ մեր երեխաների մէջ շատ կան երաժշտութեան ընդունակ անհատներ։ Սակայն սրանք ևս երաժշտական աշխարհի համար անյայտ պիտի կորչեն, որովհետև նրանց ծնողները վերին աստիճանի անտարբեր են դէպի իրանց զաւակների երաժշտական ընդունակութիւնները։

Ցաւօք սրտի պէտք է նկատել, որ ծնողներից շատերը, համոզված լինելով որ իրանց երեխաները լաւ ձայն ունեն, և կամ շատ սէր ունեն երաժշտութեան, այնուամենայնիւ ամեն բանի վրա կոպէկի տեսակէտից նայելով, մղում են իրանց որդոց դէպի փաստաբան, բժիշկ, ճարտարապետ, աստիճանաւոր, վաճառական կամ արհեստաւոր լինելու ճանապարհները։

Որքան էլ ուզում ես այդպիսի ծնողներին համոզել և խորհուրդ տալ, որ իրանց որդոց երաժշտական ուսում տան, նրանք երբեք չեն համոզվի։ Որովհետև մեզանում դեռ երկար ժամանակ հասկանալու չեն թէ երեխաներին պէտք է կրթել համաձայն նրանց բնական առանձնայատուկ ընդունակութիւնների, ուստի դեռ երկար ժամանակ մենք տալու չենք եւրոպական մտքով իսկական երաժիշտներ։

Փօստօեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս յայտնի է, բնագէտների և բժիշկների XIII համագում. փակվելուց առաջ շնորհակալական հեռագիր ուղարկվեց համագումարի պատուաւոր նախագահ կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի ստորագրութեամբ Կովկասի փոխարքայ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին։ Ի պատասխանի այդ հեռագրի, կոմսը ուղարկել է այսպիսի հեռագիր. «Սրտանց ուրախ եմ ռուս բնագէտների և բժիշկների համագումարի աջող աշխատանքի համար։ Բուռն ողջունում եմ համագումարի որոշումը՝ թէ անհրաժեշտ է բազմակողմանի կերպով ուսումնասիրել Կովկասը և գիտական տեսակէտից պարզել նրա կարիքները։ Ուրախ եմ, որ կարողացայ հնարաւորութիւն տալ համագումարին գումարվել Թիֆլիսում։ Զգացված եմ բարեմաղթութիւններից։ Գեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկով»։

◆ Փոխարքայի պաշտօնակատարի կողմից նշանակված մասնաժողովը ինժենէր Բույնովի նախագահութեամբ արդէն ձեռնարկել է քննելու այն պատճառները, որոնց գոյութեամբ տեղի ունեցաւ քաղաքային տան փլումը Գոլովինսկի պրօսպէկտի վրա։ Բույնովը մանրամասն ծանօթացաւ քաղաքային վարչութեան մէջ շինարարական բաժանմունքի գործունէութեան հետ։

◆ Յունիսի 26-ին մի խառն յանձնաժողով, բաղկացած քաղաքագլուխ Ալ. Խատիսեանից, քաղաքային վարչութեան անդամներ Ժուրուլիից և Մ. Աթաբէգեանից, կրուժօկի ներկայացուցիչներ ինժենէրներ Դէնիսէնկօյից, Լենչէվսկիից, աւագներ՝ Տուրբօվինչից, Կուչէվսկիից, քաղաքային տեխնիկներ Զուրաբեանից, Ս. Լիսիցեանից, Տէր-Օհանեանից, Մուխրանսկիից, Աբէսօլօմօվից, ձայնաւոր տեխնիկներ Խարազեանից, Քասվարեւից, դիտեց փլված տունը։ Բացատրութիւններ տալիս էր վերանորոգութեան վրա հսկող ինժենէր Զախլէվը։ Մանրազնին քննութիւնից յետոյ յանձնաժողը իրան առաջարկված հարցերին տուեց այսպիսի պատասխաններ. 1) Հարց.—Կապ ունի՞, արդեօք, տան փլված առաջին մասը տան ներքին պատերի հետ թէ ոչ։ Պատասխան.—Չը շօշափելով տան ծածկոցի փլումը առաջ բերած պատճառները և կամ որեւէ մէկի յանցանքը՝ պէտք է ընդունել, որ ոչ մի կապ յիշեալների միջև չը կայ։ 2) Հարց. Արդեօք տան պատերի ներկայ դրութիւնը, եթէ բոլոր անհրաժեշտ վերանորոգութիւնները կատարվեն, ապահովում է շինութեան ամրութիւնը, թէ ոչ։ Պատասխան.—Տան պատերի ներկայ դրութիւնը բոլոր վերանորոգութիւններից յետոյ միանգամայն ապահով է դարձնում շինութեան ամրութիւնը։ 3) Հարց.—Հնարաւո՞ր է, արդեօք, նախագծով որոշված երրորդ յարկ կառուցանելը այդ շինութեան վրա։ Պատասխան.—Տեխնիկական տեսակէտից իրագործելի։

◆ Յունիսի 28-ի առաւօտը Թիֆլիսում տեղի ունեցաւ նոր փլում, որ դարձեալ չարաբաստիկ կերպով կապված է քաղաքային վարչութեան հետ։ Նիկօլայէվսկի մեծ կամուրջի և Նաբերէժնայա փողոցի ծայրին գտնվող պատի մի մասը փլվեց դէպի Կուր գետը։ Բարեբաղդաբար այդ պահին մայթի վրա անցորդներ չեն եղել, ապա թէ ոչ դժբաղդութիւնը անխուսափելի կը լինէր։ Իսկոյն ոստիկանութիւնը շրջապատեց դէպքի տեղը և թոյլ չը տուեց անցորդներին մօտենալ նրան։

◆ Քաղաքային վարչութիւնը կարգադրել է իր տեխնիկներին խստիւ հետևել քաղաքի հին շինութիւնների վրա։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը դարձեալ առաջարկել է պրիստաւներին պատուիրել ոստիկանական պաշտօնեաներին քաղաքավարի վարվել ազգաբնակութեան հետ։

◆ Դողէրոցք (մալարիա) հիւանդութեան դէմ կռւելու համար անդրկովկասեան զէմստվային գումարներից յատկացված է 10,000 ռուբլի։

◆ Երէկ Սղնախի խան Դաւիթ Աւան-Իւզբաշեանի կացարանի վերին մասը այրվեց։ Հրդեհը հանգցրին տնային միջոցներով։

◆ Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութիւնը արդէն ներկայացրել է մինիստրների խորհրդին մի նախագիծ՝ Աբասթումանի հանքային ջրերը զինւորական վարչութեան տնօրինութիւնից հանքային վարչութեան իրաւասութեանը յանձնելու մասին։

◆ Յօգուտ Բաթումի քաղաքի ներմուծվող ու արտահանվող ապրանքներից որոշ տուրք վերցնելու խնդիրը Պետերբուրգում լուծվել է դրական մտքով։

◆ Գանձակում հեղեղը կարկուտի հետ զգալի վնասներ է պատճառել այգետէրերին։

◆ «Յ. Ր.»-ի ասելով Կախէթի երկաթուղու կառուցման նախնական աշխատանքները առաջ են գնում ուժեղ տեմպով։

◆ Վրաց ազնուականութիւնը կոնցէսիա է խնդրում Կախէթի երկաթուղին կովկասեան լեռնաշղթայով նախագծված երկաթուղագծի հետ նոր շաղկապող գիծ կառուցանելու համար։

◆ Էջմիածնից մեզ գրում են, որ Վեհ. Հայրապետը ամսիս 25-ին ուղևորվել է իր ամարանոցը՝ Բիւրական։ Նրան ճանապարհ գցելու գնացել են Երևանի փոխ-թեմակալ Խորէն եպ., վանական կառավարութեան նախագահ Մուշէ վ., դիւանապետ Բագրատ վ. և ուրիշ հոգևորական ու աշխարհական անձինք։

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ժողովրդական Տանը ժողովրդական ներկայացումներ կազմակերպող վրաց խմբակցութեան շնորհալի ռեժիսեոր Ալ. Ծուծունավան հրաժարվում է իր սիրած պաշտօնից, ինչպէս երևում է նրա «Սախալխո Գազէթի» վրաց լրագրում տպված նամակից, հակառակ իր ցանկութեան, շնորհիւ խմբակցութեան մէջ ստեղծված այնպիսի պայմանների, որոնց հետ Ծուծունավան հաշտվել չէ կարող, թէ բարոյական և թէ սկզբունքային տեսակէտով։

Ծուծունավայի նման եռանդուն և ընդունակ ռեժիսեորի հեռանալը վրաց ժողովրդական ներկայացումների կազմակերպման գործից շատ ցաւալի է։

«Սախալխո Գազէթի» վրացերէն լրագրում տպված է հետևեալ տեղեկութիւնը.

«Գորու գաւառի Մեխեխի գիւղացի պարիկմախէր Շալւա Բօճօրիձէն իր 12 տարեկան հարազատ քրոջը, որը ծնողներից զրկվելուց յետոյ գտնվելիս է եղել յիշված Շալւայի խնամատարութեան տակ, յունիսի 23-ին, գիշերվայ ժամը 1-ին զարթեցնելով քնից դուրս է բերում տնից, որպէս թէ Թիֆլիս բերելու նպատակով, յայտնելով այդ մասին թէ հարևաններին և թէ փոքրիկ քրոջը։ Երբ հասել են այնտեղ, որտեղ Կուր գետի վրայով պէտք է անցնէին կամուրջով, գազանացած եղբայրը գրկել է քրոջը, ասելով թէ սա կը վախենայ երևի և ոտքով չէ կարող անցնել կամուրջը։ Սակայն երբ հասնում է կամուրջի մէջտեղ, շպրտում է քրոջը և գլորում գետի կատաղի ալիքների մէջ... Բայց փոքրիկ զոհին վիճակված չէ եղել մեռնելը... Ջրի մէջ հին գերաններ են եղել, որոնց յենվելով հրաշքով կենդանի է մնացել և կիսակենդան ձայնով օգնութիւն աղաղակել։ Այդ նոյն ժամին նոյն կամուրջից անցնելիս է լինում և մի պառաւ կին, որ գալիս է եղել մօտ կայարանից. գիշերվայ մթութեան մէջ լսելով երկիւղից սարսափի եկած երեխայի ողբ ու աղաղակը, պառաւը վախենում է և երեսին խաչակնքելով ասում. «Նալաթ սատանին, Թո՛ւհ... թէ անիծված ես, ոչնչացիր»... «Անիծված չեմ, դէդի ջան, մարդարարած եմ, քրիստոնեայ եմ» պատասխանում է աղջիկը, վախեցած պառաւի աղօթքանէծքին։ Մինչ այդ հասնում են և ուրիշ ճանապարհորդներ, որոնք և դուրս հանելով գետից կիսաշունչ երեխային՝ ուշքի են բերում, լսում նրանից բոլոր մանրամասնութիւնը։ Նրան տանում են ոստիկանատուն հարց ու փորձի և բանտարկում գազանամարդ եղբօրը... Ասում են, որ չարագործ եղբայրը սաստիկ աղքատութիւնից սկզբում անասելի ծեծերի է ենթարկելիս եղել քրոջը, բայց դրանով չը բաւականանալով՝ որոշում է սպանել, որպիսի փորձը այս հետևանքը ունեցաւ»։

Բենիամին

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Р. М.»-ին հեռագրում են Բերլինից. «Արիւնահեղ ճակատամարտից յետոյ սերբերը վերցրին Իշտիբը։ Բօլգարների դրութիւնը պատերազմի դաշտում չափազանց ողբալի է ներկայանում. բօլգարական չորրորդ զօրաբանակը ջարդված է. գեներալ Իվանովի զօրքը, շրջապատված՝ սերբ և յոյն զօրքերից, պարտութեան վտանգի է դատապարտված. Ռումինիայի պահանջները Բօլգարիայից աւելանում են։ Սօֆիայում տիրում է ճնշված տրամադրութիւն։ Ասում են, որ կառավարութիւնը մտադիր է դիմել մեծ պետութիւններին՝ խնդրելով պաշտպանել Բօլգարիան վերջնական կործանումից»։

◆ Վերջին հեռագիրը հաղորդում է, որ Ռումինիան արդէն սկսել է պատերազմական գործողութիւնները։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։

◆ Յունաստանի և Թիւրքիայի միջև գաղտնի բանակցութիւնները շարունակվում են։

◆ Ուսկիւբից հեռագրում են, որ բօլգարական զօրքերի մէջ խոլերան մեծ թւով զոհեր է տանում։ Դասալիք զինւորների թիւը խոշոր է։

◆ Թիւրքաց պաշտօնական օրգան «Թանին» կառավարութեան ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ Բօլգարիան իր հաշիւները Սերբիայի հետ տեսնելուց յետոյ անմիջապէս դիմելու է դէպի Կ. Պոլիս։ Այդ պատճառով անհրաժեշտ է այժմեանից խորտակել բօլգարների ուժը։ Արդէն Կ. Պոլսից ուլտիմատում է ուղարկվել Սօֆիա, որով Բ. Դուռը պահանջում է վեց օրում յետ քաշել բօլգար զօրքերին Մարմարայ ծովափից։

◆ «Н. Вр.»-ին Լոնդոնից հեռագրում են, որ Թագաւորական շքակառքի անցնելու ժամանակ սուֆրաժիստուհիները փորձեցին յարձակում գործել թագաւորի վրա, բայց անմիջապէս կալանաւորվեցին։ Կենտէտօն արուարձանում ոստիկանութիւնը երևան հանեց ռումբերի ու վառօդի հսկայական պահեստ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

27 յունիսի

ՈՒՐԳԱ։ Յունիսի 26-ին հարաւային սահմանում բազմաքանակ մօնգօլական զօրախմբերը ընդհարում ունեցան 2500 չին զօրքերի հետ։ Չինացիների գլխաւոր ուժերը կազմում են 15,000 զինւոր։

ՊԵԿԻՆ։ Ռուսաց դեսպանի կտրուկ պահանջից յետոյ չինական կառավարութիւնը խոստացաւ բաւարարութիւն տալ դաժան ռուսներին։ Ցիցիկարի նահանգապետը յետ կանչվեց, յանցաւորները կը պատժվեն։

Տեղական վաճառական Վորօնովի աւտոմօբիլի խորտակման ժամանակ շօֆֆէրը սպանվեց, Վորօնովի կինը և քոյրը ծանր վիրաւորվեցին, երկու հոգի վիրաւորվեցին թեթև։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Ժանտախտի դէմ մաքառելու ուղարկված բժիշկ Թէդօրօվը յանկարծամահ եղաւ։

ՄԻՆՍԿ։ Յունիսի 26-ի կէս գիշերին հրէական սինագօգում ոստիկանութիւնը երևան հանեց մօտ 400 բանւորների ժողով։ Շատերը փորձեցին փախչել, որի ժամանակ և ստացան վնասուածքներ։ Կալանաւորվեցին 74 հոգի։

ՎԻԵՆՆԱ։ Անյայտ չարամիտներ աշխատեցին յարձակում գործել Ֆէլիկստորֆի վառօդի ու ռազմամթերքի պահեստի վրա։ Պահակ-զինւորները կրակեցին և վիրաւորեցին չարամիտներից մինին, որին ընկերները տարան հետները։

ԲԵՐԼԻՆ։ Այսօր ռուսաց դեսպան Սվերբէևը մեկնեց Ռուսաստան։

ՊԱՐԻԶ։ Քաղաքային ինքնավարութեան տան մէջ վարչութիւնը ողջունեց օդագնաց Բրէնդէժօնին և յանձնեց նրան ոսկէ շքանշան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խուզարկու բաժանմունքների կառավարիչների համագումարը ընդունեց, որ խուզարկու ոստիկանութեան պաշտօնեաները իրանց պարտականութիւնները կատարելու համար իրաւունք չունեն պարգևներ վերցնել մասնաւոր անձերից։ Որոշվեց թոյլ տալ պաշտօնեաներին կրել քաղաքացիական զգեստ, իսկ համազգեստով լինել միայն բացառիկ դէպքերում։ Որոշվեց նաև, որպէսզի խուզարկութիւնների ժամանակ խուզարկու ոստիկանութեան պաշտօնեաները պարտաւորապէս ցոյց տան իրանց պաշտօնը, մատնանշելով օրէնքի որոշ յօդուածը։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КУСОКЪ 10 К.
Ферд. Мюльгенсъ №4711
Teer-Seife
Дегтярное мыло
4711
противъ хроническихъ накожныхъ болѣзней и всякаго рода сыпей, какъ и для сохраненія и смягченія кожи.
Ферд. Мюльгенсъ №4711

ԿԱՇԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԵՒ
քոսի, ցանի դէմ:
Կաշու քրօնիկական հիւանդութիւնների դէմ:
Մազերը խնամելու:
Մազերը թափվելու դէմ։

ՌՈՒՍԱԿԱՆ №4711
ԴԵԳՏԵԱՐ ՍԱՊՈՆԸ
շագանակագոյն արկղի մէջ է,
ունի օրէնքով հաստատված №4711
ՄԻԱԿ ՖԱԲՐԻԿԱՆՏ
Ֆերդ. Միւլգենս ԿԵՕԼՆ, ՌԻԳԱ։
5—4

Ծախվում է ամենուրեք։
(M. 239572/239577)

КРЕМЪ МЕТАМОРФОЗА
ОТЪ ВЕСНУШЕКЪ и ЗАГАРА
НАСТОЯЩІЙ
ТОЛЬКО
Т-ва ПРОВИЗОРА
А. М. ОСТРОУМОВА

(M. 147685) 15—15

ՀՐԱՒԷՐ

Համաձայն վիճակային կոնսիստորիայի ներկայ տարվայ մայիսի 30-ին № 2639 առաջադրութեան, Թիֆլիսի Հրեշտակապետաց եկեղեցում նշանակված է նոր երեցփոխի և երկու հաշւեքննիչների ընտրութիւն կիրակի, յունիսի 30-ին, ժ. 11-ին. ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու ծխականներին շնորհ բերել նշանակված ընտրութեան մասնակցելու։

Այս ժողովը երրորդը և վերջինն է համարվում։

Գործակալ Ս. մօր Թիֆլիսի եկեղեց.
Սարգիս ա.-ք. Շիօյեանց

536. 1—1

Т-во
С. И. ЧЕПЕЛЕВЕЦКІЙ
съ С-ми
МОСКВА
НОВОСТЬ
ДУХИ
САНСАЙ

(յուն. 29) (M. 239870) 2—2

ԳՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ"

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է լաւ հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։

ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղերի Ապրանքների վաճառանոցում։

(7.) 0—25

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՉԻԿՕՂԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Արեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՐԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—68

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացք № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստատար գնացք № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար գնացք № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացք № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Պօստատար գնացք № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացք № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացք № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացք № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստատար գնացք № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ Մարդատար-ապրանքատար գնացք № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄ.—Մարդատար գնացք № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացք № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստատար գնացք № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացք № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ Խառն գնացք № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստատար գնացք № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ Մարդատար գնացք № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացք № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստատար գնացք № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացք № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացք № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացք № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный